3.qxd 18/02/2025 14:15 Page 1

ԳԵՂԱՄԱ ՏԱՐԱՀ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 14 փետրվարի 2025թ. թիվ 3 (607)

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ ԿԱՏԱՐԵՑ ՄԱՐՏՈՒՆՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Փետրվարի 4-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանն աշխատանքային այց կատարեց Մարտունու բժշկական կենտրոն՝ բուժհաստատության շենքի տանիքին արեւային ֆոտովոլտային կայանի տեղադրման աշխատանքների ընթացքին ծանոթանալու եւ տեղում բուժանձնակազմի հետ որոշակի աշխատանքային հարցեր քննարկելու նպատակով:

Մարզպետը շրջայց կատարեց արեւային ֆոտովոլտային կայանի տեղադրման շինհրապարակում, պոլիկլինիկական, ինֆեկցիոն, թերապեւտիկ, մանկական բաժանմունքներում, անհետաձգելի բուժօգնության եւ հեմոդիալիզի սրահներում, զրուցեց բուժանձնակազմի եւ շինարարների հետ, իսկ տնօրինության հետ քննարկեց առաջնահերթ լուծում պահանջող մի շարք հարցեր:

«Հայաստանի վերականգնվող էներգետիկայի եւ էներգախնայողության հիմնադրամի» եւ Մարտունու բժշկական կենտրոնի միջեւ կնքված պայմանագրի համաձայն՝ Մարտունու ԲԿ շենքի տանիքին տեղադրվում է 150 կիլովատտ ժամ հզորության արեւային ֆոտովոլտային կայան, որը շուրջ 11 միլիոն դրամով կնվազեցնի բուժհաստատության էներգետիկ ծախսերը:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի հունվարի կեսերից եւ կավարտվեն առաջիկա օրերի ընթացքում: Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է շուրջ 19 միլիոն, որի 20 տոկոսը ներդրում է Մարտունու բժշկական կենտրոնը, 80 տոկոսը՝ «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի եւ էներգախնայողության հիմնադրամը»:

«Մարտունու ԲԿ տանիքին արեւային ֆոտովոլտային կայանի տեղադրմամբ մենք ստեղծում ենք կարողություններ, որոնք ուղղելու ենք բուժհաստատության շարունակական զարգացմանն ու առաջընթացին: Ձեւավորվում է նկատելի գումարի խնայողություն, որի հաշվին կիրականացվեն տեխնիկական վերազինման նոր ծրագրեր, կներդրվեն բժշկական նոր ծառայություններ»,-շրջայցի ավարտին իր տպավորություններով կիսվեց Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆՆ ԱՆՑԿԱՑՐԵԼ Է ՄԱՐԶԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՄՓՈՓԻՉ ՆԻՍՏ

Գեղարքունիքի մարզպետ, Գեղարքունիքի մարզի զորակոչային հանձնաժողովի նախագահ Կարեն Սարգսյանն անցկացրել է մարզային զորակոչային հանձնաժողովի հերթական եւ 2025 թվականի ձմեռային զորակոչի վերջին նիստը, որին մասնակցել են զորակոչային հանձնաժողովի բոլոր անդամները:

Քննարկվել են ձմեռային զորակոչի ավարտական փուլերին վերաբերող հարցեր, որոնցից հետո ՀՀ ՊՆ ՀԶԿ Գեղարքունիքի մարզի զինվորական կոմիսար, գնդապետ Արմեն Մնացականյանը զեկուցել է հանրակրթական ուսումնական հաստատությունների ավարտական դասարաններում սովորողների տարկետումներին վերաբերող հարցեր, որոնց ուղղությամբ հանձնաժողովը տվել է համապատասխան եզրակացություններ:

Հանձնաժողովը քննարկել է նաեւ զորակոչի աշխատանքներին ներգրավված կազմակերպությունների փոխգործակցությանն ուղղված հարցեր, որոնց վերաբերյալ մարզպետը տվել է համապատասխան հանձնարարականներ:

Նիստի ավարտին զինվորական կոմիսարը զեկուցել է, որ ձմեռային զորակոչի նախնական առաջադրանքը Գեղարքունիքի մարզում գերակատարվել է:

Նիստի ընթացքում քննարկվել են նաեւ պաշտպանական ոլորտին առնչվող այլ հարցեր:

ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ «ԴԵՄԵՐ» ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԻ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն գյուղում մարդկային կյանքը սկզբնավորվել է անհիշելի ժամանակներից եւ, գրեթե առանց ընդմիջումների, հասել մինչեւ մեր օրերը: Բավական է ասել, որ այժմ Ներքին Գետաշենը, 2016 թ. մարդահամարի տվյալներով, համարվում է Հայաստանի Հանրապետության ամենախոշոր գյուղական բնակավայրը՝ 9430 բնակչությամբ ու 2386 տնտեսությամբ:



Ներքին Գետաշենը տարածվում է Սեւանա լճի հարավարեւմտյան ափամերձ հատվածում, Արգիճի կամ Իշխանագետ գետի արեւելյան ու արեւմտյան ափերին, Արմաղան լեռան հյուսիսային կողմում: 2378 հեկտար մակերես ընդգրկող գյուղի տարածքում բազմաթիվ են պատմամշակութային հուշարձանները: Դրանց թվում են բրոնզ-երկաթեդարյան դամբարանները, միջնադարյան գերեզմանոցները, եկեղեցիները, շուրջ 700 խաչքար-տապանաքարերը, մատուռները, ջրաղացները եւ այլ պատմաճարտարապետական հնավայրեր:

/շարունակությունը՝ էջ 4-ում/

ՄՈՐՈՒՔ ԿԱՐՈՅԻ ՎՐԵԺԸ
/Քնարական պոեմ/



1943 թվականին Թավրիզում հրավիրված խնջույքի սեղանի շուրջ անգլիացի սպան, հաշվի առնելով հայ ականավոր ֆիդայի Մորուք Կարոյի հալածանքը սովետական կառավարության ու չեկիստների կողմից, հայտնում ու պարծենում է, թե ինքն իր ձեռքով է Աղջակումայի ավազուտներում գնդակահարել հայ բոլշեւիկ, Բաքվի 26 կոմիսարների ղեկավար Ստեփան Շահումյանին: Բոլոր սեղանակիցներին թվում է, թե Մորուք Կարոն, այդ նորությունը լսելով, տեղից վեր կցատկի ու խանդավառված կհամբուրի անգլիացի սպայի ճակատը:

Սակայն, ի զարմանս ու ի սարսափ նրանց, Մորուք Կարոն գրպանից հանում է ատրճանակը եւ ցրիվ տալիս նրա գանգը՝ գոչելով.

-Ի՞նչ, դու իմ հայի՞ն ես գնդակահարել:

1

Մորուք Կարոյի մտքերն են թռչում
Սասունից Թալին, այնտեղից՝ Թավրիզ,
Հերթով, մեկառմեկ աչքին պատկերվում
Կռիվներն ահեղ, ընկերներն հերոս:
Կենաց կենացի վրա են խմում
Իր սեղանակից ընկերներն ինգլիզ,
Հզոր ֆիդայի Զնգլիկ Պետոն,
Իշխաններ պարսից՝ սիրով, հոտընկայս:
Սեղանն առատ է, ու գինին էլ՝ թունդ,
Նոր զրույցներ են ամեն կենացին
Ծնվում, ծավալվում՝ աշխույժ, սրտամոտ,
Եվ հին հուշերն են ոգի, կյանք առնում...
Կարոն չի խոսում, չի լսում անգամ,
Հիշում է միայն իր կյանքը թափառ,
Գոյամարտերի արյունոտ ճամփան,
Հայրենի հողի կարոտը հզոր...
Գելիգուզանի սարերն է հիշում,
Նրանց լանջերի հոտերն արածող,
Իրենց տուն տանող քարքարոտ ճամփան,
Ու մոր ձեռքերը՝ խմոր գրտնկող:
Աղբյուր Սերոբի հայացքն է հիշում,
Հրայր Դժոխքի խոսքերն իմաստուն,
Գեւորգ Չաուշի ձայնը առնական
Ու Անդրանիկի խոյանքը վսեմ...
Սասունցիների կռիվն է հուժկու
Արթնացած հոգին մեկեն փոթորկվում,
Լուռ ըմպում է նա գավաթը գինու,
Ձեռքը տրոփող քունքին մոտ տանում:
Մշուշի միջից տեսնում է իրեն
Ձորապռնկի դիրքում կռվելիս,
Ամեն զարկի հետ անվրեպ խոցում,
Ենիչարներին մահի է տալիս:
Հրանոթների որոտի ներքո
Արկերն են հայոց դիրքերին պայթում:
Դիմակայում են մինչեւ երեկո
Թուրք ենիչերուն, քրդի խուժանին:
Երակների մեջ վրեժն է եռում,
Ցնցում վիրավոր հողը հայրենի:
Փոշին նստել է քրտնած ճակատին,
Անհագ ծարավն է կոկորդը խեղդում:
Բայց ինքնամոռաց կրակում է նա,
Ոսոխի ջարդից նոր ավյուն առնում:
Ցեխոտ, ճղճղված հագուստի վրա
Բաց վերքից արյան շիթն էր ներծծվում...

/շարունակությունը՝ էջ 8-ում/

3.qxd 18/02/2025 14:15 Page 2

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԸ՝ «ՎԱՐԿԱՆԻՇ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը հանրային կարծիքի ուսումնասիրման եւ գնահատման արդյունքում «Վարկանիշ» ընկերության կողմից անցկացվող «THE LEADER 2025» մրցանակաբաշխության շրջանակներում ճանաչվել է «ՏԻՄ ոլորտում երկարամյա արդյունավետ կառավարում» անվանակարգի հաղթող:

Մարտունի համայնքը ներառում է քաղաքային մեկ եւ գյուղական տասնվեց բնակավայրեր, որոնց զարգացումը, բարեփոխումները եւ ներդրումները համաչափ կերպով իրականացվում են՝ բարձրացնելով բնակչության կենսապայմանները եւ կյանքի որակը...

Հովհաննես Հովեյանի կառավարման տարիներին էապես նկատելի է այն առաջընթացը, որ ապրել է Մարտունի համայնքը կենսագործունեության բոլոր ոլորտներում:

Բավական է ասել, որ վերջին երեք տարիների ընթացքում կառուցվել կամ հիմնանորոգվել են հարյուրավոր կիլոմետրերի հասնող ճանապարհներ, խմելու եւ ոռոգման ջրատարներ, լուսավորության ցանցեր, մի շարք դպրոցների ու մանկապարտեզների շենքեր, գրանցվում են մարզական ու կրթամշակութային հաջողություններ:

Եվ այս ձեռքբերումներն արդյունք են Հովհաննես Հովեյանի երկար տարիների աշխատանքային փորձի, նվիրումի, սրտացավության ու հետեւողականության, ՀՀ կառավարության ու Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի հետ ծրագրված, արդյունավետ համագործակցության:

Մարտունու համայնքապետարանը Հովհաննես Հովեյանի ղեկավարությամբ 2025 թվականին եւս նախատեսում է իրականացնել սոցիալ-տնտեսական ու կենսական նշանակության բազմաթիվ ծրագրեր, որոնց արդյունքում կշարունակեն բարելավվել բնակչության կենսապայմանները, կզարգանան ենթակառուցվածքները, կստեղծվեն նոր աշխատատեղեր, էական առաջընթաց կգրանցվի համայնքի կենսագործունեության ամենատարբեր ոլորտներում:

Հետգրություն- «Գեղամա աշխարհ» թերթը «Վարկանիշ» ընկերության կողմից անցկացվող «THE LEADER 2025» մրցանակաբաշխության շրջանակներում «ՏԻՄ ոլորտում երկարամյա արդյունավետ կառավարում» անվանակարգում հաղթելու կապակցությամբ շնորհավորում է Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանին ու Մարտունու համայնքապետարանի աշխատակազմին, մաղթում քաջառողջություն, աշխատանքային անսպառ եռանդ ու նորանոր հաջողություններ եւ ձեռքբերումներ՝ ի շահ Մարտունի համայնքի ծաղկման ու հզորացման:

«Գեղամա աշխարհ»

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԸ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԶՄԵՌԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԽԱՂԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է 17 ՄԱՐԶԻԿՆԵՐՈՎ

Գեղարքունիքի մարզը Համահայկական ձմեռային երկրորդ խաղերին մասնակցեց 17 մարզիկներով՝ շախմատ եւ սպորտային պարեր մարզաձեւերից:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչությունից, Ջերմուկում փետրվարի 1-ին կայացած Համահայկական ձմեռային երկրորդ խաղերի բացման հանդիսավոր արարողությունը մասնակցել է նաեւ ՀՀ Գեղարքունիքի մարզի պատվիրակությունը՝ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի ղեկավարությամբ:

Գեղարքունիքի մարզի 41 պատվիրակներից 17-ը մարզիկներ էին, որոնք խաղերի ընթացքում իրենց ուժերը փորձեցին շախմատ եւ սպորտային պարեր մարզաձեւերում:

Մեր մարզիկներից լավագույն արդյունքը ցույց է տվել Ճամբարակ համայնքի բնակիչ, շախմատիստ Գարիկ Մարտիրոսյանը՝ գրավելով 5-րդ տեղը:

Համահայկական երկրորդ խաղերին մասնակցեցին ավելի քան 1340 պատվիրակ՝ աշխարհի 18 պետությունների 88 քաղաքներից:

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՆԱԴԱՅԻ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻՆ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Կանադայի դեսպանատան քաղաքական խորհրդական պարոն Ահարոն Քոունին,«Կանադայի Տեղական նախաձեռնությունների հիմնադրամի» տարածաշրջանային համակարգող տիկին Աննա Ժուգանին, «Դեմոկրատիան այսօր» ՀԿ-ի հիմնադիր եւ նախագահ Գյուլնարա Շահինյանին:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, համայնքի ղեկավարը ողջունել է հյուրերին եւ նրանց ներկայացրած ծրագիրը՝ օժանդակելու համայնքի կանանց շահառու խմբին:

Քննարկվել եւ հստակեցվել են առաջիկայում Մարտունի համայնքում իրականացվելիք աջակցության ծրագրի մանրամասները:

«Կանադայի տեղական նախաձեռնությունների հիմնադրամի» աջակցությամբ «Դեմոկրատիան այսօր» հասարակական կազմակերպությունը Մարտունի համայնքում զարգացնում է տեղահանված եւ տեղացի կանանց կարողությունները՝ տնտեսական եւ քաղաքացիական կրթության միջոցով:

Ընդունելությունից հետո կայացել է հանդիպում Մարտունի համայնքում բնակվող 43 կանանց եւ Կանադայի աջակցությունը ներկայացնող խմբի հետ, որի ընթացքում անցկացվել են քննարկումներ կանանց հուզող խնդիրների վերաբերյալ:

ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԲԱԶՄԱՇՈՒՆՁ ԸՆՏԱՆԻՔԸ ԲՆԱԿԱՐԱՆԱՄՈՒՏ Է ՆՇԵԼ

Արցախի Մարտակերտի շրջանից 2023 թվականին բռնի տեղահանված եւ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ գյուղում վարձով ապրող Մարտին Գրիգորյանի ընտանիքը բնակարանամուտ է նշել Վարդենիս քաղաքի բազմաբնակարան շենքերից մեկում, ԱՄՆ «Փարոս» հիմնադրամի միջոցներով:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, բնակարանի բանալիներն անձամբ հանձնել է «Փարոս» հիմնադրամի տնօրեն Փիթեր Աբաջյանը:

Մարտին Գրիգորյանը Արցախից Վարդենիս է բռնագաղթել իր կնոջ ու երեք երեխաների հետ միասին, իսկ չորրորդ երեխան ծնվել է Հայաստանում, 2024 թվականի նոյեմբերին:

«Փարոս» հիմնադրամը բազմաբնակարան շենքում գնել, հիմնանորոգել ու բոլոր հարմարություններով կահավորել է 3 սենյականոց բնակարան ու այն հանձնել շահառու ընտանիքին: Չորս երեխաներից երկուսը դպրոցական են:

Մարտին Գրիգորյանն աշխատանք է գտել Վարդենիսի էլցանցում, իսկ նրա կին Նուբարը զբաղված է երեխաների խնամքով:

«Գեղամա աշխարհ»

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ Է ՀԱՆՁՆՎԵԼ Մ-4 ՄԱՅՐՈՒՂԻՆ ԾՈՎԱԳՅՈՒՂԻՆ ԿԱՊՈՂ ԿԱՄՈՒՐՋԸ

Արդեն մի քանի օր է, ինչ շահագործման է հանձնվել Մ-4 մայրուղին Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Ծովագյուղ բնակավայրին կապող կամուրջը:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, Ծովագյուղի կամրջի շինարարական աշխատանքները մեկնարկել են 2023 թվականի վերջերից եւ ավարտի հասցվել 2024 թվականի վերջին: Մ-4-Ծովագյուղ հին կամուրջը քայքայվել էր՝ կորցնելով շահագործման պիտանիությունը, այդ պատճառով էլ որոշվել էր կառուցել նոր, միաթռիչք կամուրջ՝ 28 մետր երկարությամբ ու 10 մետր լայնությամբ, հետիոտնի համար մայթերով: Կամրջի շինարարության պայմանագրային արժեքը կազմել է 328,8 միլիոն դրամ, որն ամբողջությամբ հատկացվել է պետբյուջեի միջոցներից: Շինարարարությունն իրականացրել է «Ծովագյուղի ճՇՇ» ՍՊԸ-ն:

«Գեղամա աշխարհ»



ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱԿՈԲՅԱՆԸ «ՀՀ ԴՅՈՒՅԱԶՆԱԳՐՔԻ» ՀԵՐԹԱԿԱՆ ՌԵԿՈՐԴՆ Է ՍԱՀՄԱՆԵԼ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի մարզիկ, ուժային եռամարտիկ, միջազգային բազմաթիվ մրցաշարերի հաղթող, «Դյուցազնագրքի» բազմակի ռեկորդակիր Վարազդատ Հակոբյանը հերթական երկու ռեկորդներն է սահմանել:

Ինչպես տեղեկացրեց «ՀՀ Դյուցազնագրքի» հիմնադիր նախագահ Վարդան Թովմասյանը՝ օրերս Վարազդատ Հակոբյանը երեք հատ թենիսի գնդակը ձեռքերի վրա պտտել եւ 5 անգամ միաժամանակ կքանստել է աջ ոտքով՝ ձախ ոտքը վերեւ պարզած եւ գնդակներից մեկը, առանց բասկետբոլի զամբյուղին նայելու, գցել զամբյուղը: Իսկ երկրորդ ռեկորդը սահմանել է հետեւյալ կերպ. 4 հատ բասկետբոլի գնդակները շրջված վիճակում, մի քանի մետր հեռվից նետել է դեպի զամբյուղը, որոնցից 3-ը հայտնվել են զամբյուղի մեջ: Ռեկորդները գրանցվել են Սեւան համայնքում :

«Գեղամա աշխարհ»

3.qxd 18/02/2025 14:15 Page 3

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵՑ ԳՊՀ ՀԻՄՆԱԴԻՐ ՌԵԿՏՈՐ ՀՐԱՆՏ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇ-ՑԵՐԵԿՈՒՅԹ

Գեղարքունիքի երկրագիտական թանգարանում անցկացվեց Գավառի պետական համալսարանի հիմնադիր ռեկտոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Հակոբյանին նվիրված հուշ-ցերեկույթ:

Թանգարանում 2012 թվականից բացվել է փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր մանկավարժ, Գավառի պատվավոր քաղաքացի, ԳՊՀ հիմնադիր ռեկտոր Հրանտ Հակոբյանին ներկայացնող մշտական ցուցադրությունը: Իսկ հերթական հուշ-ցերեկույթի շրջանակում բացվեց նոր ժամանակավոր ցուցադրությանը, որով ներկայացնում են Հրանտ Հակոբյանին շնորհված պարգևները:

Հուշ-ցերեկույթին մասնակցեցին Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմը, թանգարանի աշխատակիցները, Հրանտ Հակոբյանի ընտանիքի անդամները, նրան աշակերտած մարդիկ ու գործընկերները: Հրանտ Հակոբյանի կյանքն ու գիտամանկավարժական եւ հասարակական գործունեության մասին զեկուցում ներկայացրեց Գեղարքունիքի երկրագիտական թանգարանի գիտաշխատող Մանյա Չարվադարյանը:

«Մանկավարժական եւ դասախոսական աշխատանքը մեկտեղվում է չընդհատվող ուսումնառության հետ: Որպես մշտապես կրթվող մարդ՝ Հրանտ Հակոբյանը կարողանում էր ճիշտ գնահատել սովորողների պահանջներն ու կարիքները, ինչը հանգեցնում է բարեփոխումների այն ուսումնական հաստատություններում, որտեղ նա դասավանդում է: Այս հանգամանքն աննկատ չի մնում եւ արժանի գնահատական է ստանում: Հրանտ Հակոբյանի գործունեության պսակը, սակայն, դառնում է հայրենի եզերքում բարձրագույն ուսումնական հաստատության հիմնադրումը, որը նաեւ նրա վաղեմի երազանքի իրականացումն էր»,- ներկայացրեց զեկուցողը:

Ցերեկույթի բանախոսին շարունակեցին եւ նրա հաղորդած տեղեկությունները լրացրին Հրանտ Հակոբյանին ճանաչող, նրա հետ լավ եւ դժվարին օրեր ապրած, նրա կյանքն ու գործն արժեւորող մարդիկ՝ Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, Սարուխանի թիվ 1 միջնակարգ դպրոցի տնօրեն Հայկ Մուդոյանը, Գավառի պետական համալսարանի դասախոս Համլետ Ղաջոյանը, մանկավարժ, Հայրենական մեծ պատերազմի վետերան Մեխակ Ավետիսյանը:

Հրանտ Հակոբյանին նվիրված ցերեկույթն ուղեկցվեց Գավառի Հենրիկ Թալալյանի անվան երաժշտական դպրոցի ուսուցիչ Շահեն Շհոյանի, Նրա դուստր Էլեն Շհոյանի, Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ուսանողուհի Լիլյա Հովհաննիսյանի, «Հայրենի երգ» ժողովրդական ստուդիայի սան Ալեն Գոքոյանի գեղարվեստական կատարումներով:

«Գեղամա աշխարհ»

ԲԱՐԻ ՀՍԿԱՆ

Մեծ էր ցանկությունս՝ օրերս ներկա գտնվել Գեղարքունիքի երկրագիտական թանգարանում պրոֆեսոր Հրանտ Հակոբյանի գիտամանկավարժական գործունեությանը նվիրված ցուցադրության բացման արարողությանը: Ցավոք, չկարողացա: Ես այն սակավաթիվ մարդկանցից եմ, ով ճանաչում է նրան համակողմանիորեն: Միասին՝ սկսած աշակերտ-տնօրեն, այնուհետեւ ուսանող-դասախոս, զուգահեռաբար՝ մասնագիտական կարիերա ենք կառուցել, միայն այն տարբերությամբ, որ նա առաջնորդ էր, ես՝ հետեւորդ: Առաջխաղացման իմ ճանապարհն անցել եմ՝ հետեւելով Հրանտ Հակոբյանին: Նա, որպես մտածող ու նորարար մարդ, բոլոր գործողություններում էր ինքնատիպ, որովհետեւ նրա շարժիչ ուժը տաղանդն էր: Սովորական մարդկանցից, մեզնից տարբերվում էր բոլորովին ուրիշ, ավելի լավ, օգտավետ ու ավելի ճշմարիտ, ազգային արժեհամակարգով: Նրա մարդկային բարձր որակները ներկայացնելիս չենք կարող չօգտագործել ԲԱՑԱՌԻԿ ածականը:

Հրանտ Հակոբյանը, որպես գիտնական, նոր ու խորը, միաժամանակ, լայնակոս է բացել հետազոտական բոլոր ոլորտներում՝ անցնելով դեռեւս չտրորված բազում ճանապարհներ (բավական է հիշել միայն տվյալ ժամանակի կտրվածքում նրա համարձակ հետազոտությունները՝ նվիրված Ռաֆֆու ստեղծագործություններին):

Հրանտ Հակոբյանը, որպես ուսուցիչ-մանկավարժ, նորարար է, շիտակ, ուղղախոս ու բացառիկ բարի՝ իր շուրջը համախմբելով երիտասարդ ասպիրանտների, աջակցելով նրանց գիտական հետազոտություններում:

Հրանտ Հակոբյանը, որպես կրթության կազմակերպիչ, բացարձակ անսխալ եւ արհեստավարժ, Գավառի Պետական համալսարանը կայացրեց մի քանի տարում՝ իր վրա վերցնելով պետության գործառույթները:

Որպես ընկեր, բացառիկ հավատարիմ եւ կարեւոր խորհրդատու էր, որպես հայր, ամուսին, մեծ պապ՝ բացառիկ հոգատար, անմնացորդ նվիրումով, որպես բարեկամ, բացառիկ սրտացավ ու ձեռք մեկնող:

Որպես հայ մարդ՝ բացառիկ հայրենասեր ու ազգանվեր, որպես բայազետցի՝ բացառիկ աջակցող, պատրաստակամ, թասիբով ու պատվախնդիր, հոգատար ու ջերմ՝ բնականոն զգացողությամբ:

Հասարակական միջավայրում, առօրյա աշխատանքում այն տպավորությունն էր թողնում, կարծես թե ուսանել է աշխարհի ամենաբարձր վարկանիշ ունեցող համալսարաններում, այնինչ՝ իր բնատուր ունակություններով ամեն բան ձեռք էր բերել ինքնակրթությամբ եւ աշխատասիրությամբ, գիրքը նրա անբաժան ուղեկիցն էր: Բնությունը շատ շռայլ էր գտնվել նրա նկատմամբ՝ օժտել էր տաղանդով եւ կատարելության աստիճանի հասած շքեղ, առինքնող արտաքինով: Նրա տեսակն իսկապես դասական է՝ արժանի ընդօրինակման: Վստահ եմ, որ թանգարանում ներկայացված հակոբյանական հոգեւոր ժառանգությունը նոր սերնդի համար շարունակ ուղենիշ է հանդիսանալու՝ ձգտել լինել կատարյալ, ինչպես Հրանտ Խաչատուրի Հակոբյանն էր:

Նա այն քիչ մարդկանցից էր, ով կռիվ չուներ բնության հետ, խաղաղ ու ներդաշնակ համագործակցում էր Աստծո հետ:

Սուրեն Օհանյան
Աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՍԱՐՈՒԽԱՆԻ ԹԻՎ ՄԵԿ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆ ԱՅՍՈՒՀԵՏ ԿՐՈՒՄ Է ԱՌԱՋԻՆ ՏՆՕՐԵՆ ԼԱՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԱՆՈՒՆԸ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Սարուխան գյուղի թիվ մեկ մանկապարտեզն այսուհետ կրում է նույն հաստատության առաջին ու երկարամյա տնօրեն, երջանկահիշատակ Լաուրա Մանուկյանի անունը:

Սարուխանի բնակիչների խնդրանքով կազմվել է նախաձեռնող խումբ՝ վարչական ղեկավար Լյովա Աբրահամյանի գլխավորությամբ, այնուհետ Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանին ներկայացվել է նախաձեռնող խմբի դիմումը, որն արժանացել է համայնքի ղեկավարի հավանությանը եւ ներկայացվել ավագանու հաստատմանը:

Գավառ համայնքի ավագանու համապատասխան որոշմամբ Սարուխանի թիվ մեկ մանկապարտեզն անվանակոչվել է Լաուրա Մանուկյանի անունով:

Անվանակոչությունը նշանավորվել է միջոցառմամբ:

Լաուրա Մանուկյանի ընտանիքի անդամների, հարազատների, Գավառ համայնքի կրթամշակութային հաստատությունների ներկայացուցիչների, Գրողների միության Գեղարքունիքի մարզային բաժանմունքի ղեկավար Տիգրան Նիկողոսյանի եւ Սարուխանի բնակիչների մասնակցությամբ Սարուխանի մշակույթի տանը տեղի է ունեցել միջոցառում:

Միջոցառմանը մասնակցել են նաեւ Գավառ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Գրիգոր Դաշտոյանը, համայնքի ղեկավարի տեղակալ Գրիգոր Բոշյանը:

Միջոցառումն ուղեկցվել է ելույթներով եւ գեղարվեստական կատարումներով:

Ալվարդ Մանուկյան

ՄԵՎԱՆՅԻ ԾԱՆՐԱՄԱՐՏԻԿՆԵՐԸ ՄԵԿ ՈՍԿԵ ԵՎ ՄԵԿ ԱՐԾԱԹԵ ՄԵԴԱԼ ԵՆ ՆՎԱՃԵԼ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Օրերս կայացավ ծանրամարտի ՀՀ մեծահասակների առաջնություն, որին մասնակցեցին նաեւ Սեւան համայնքի Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի ծանրամարտիկներ Ալինա Սուքիասյանը եւ Հովհաննես Հովհաննիսյանը:

Ինչպես տեղեկացրեց Սեւանի Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի ծանրամարտի մարզիչ Գառնիկ Աբրահամյանը, սեւանցի մարզիկները տուն են վերադարձել՝ մեկ ոսկե եւ մեկ արծաթե մեդալ նվաճած:

Աղջիկների մրցապայքարում 76 կիլոգրամ քաշային կարգում Ալինա Սուքիասյանը պոկել է 80, հրել 86 կիլոգրամ եւ երկամարտի 166 կիլոգրամ արդյունքով գրավել առաջին հորիզոնականը:

Տղամարդկանց մրցապայքարում Հովհաննես Հովհաննիսյանը 73 կիլոգրամ քաշային կարգում պոկել է 110 եւ հրել 140 կիլոգրամ՝ երկամարտում ապահովելով 250 կիլոգրամանոց արդյունք եւ նվաճելով արծաթե մեդալ:

Սեւանցի մրցանակակիր ծանրորդներն ընդգրկվել են Հայաստանի ծանրամարտի հավաքականի կազմում եւ առաջիկայում կմասնակցեն միջազգային հերթական մրցաշարերին:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՈՒԺՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԱՄՍԻՆ ԳՐԱՆՑՎԵԼ Է 97 ԾՆՈՒՆԴ

Գեղարքունիքի մարզի բուժհիմնարկներում 2025 թվականի հունվարին լույս աշխարհ են եկել 97 երեխա՝ 56 տղա եւ 41 աղջիկ:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական հարցերի վարչությունից, 44 երեխա ծնվել է Մարտունու ծննդատանը, 24-ը՝ Սեւանի, 20-ը՝ Գավառի, 7-ը՝ Վարդենիսի բժշկական կենտրոններում, 2-ը՝ Ճամբարակի առողջության կենտրոնում:

2024 թվականի հունվար ամսին Գեղարքունիքի մարզի բուժհիմնարկներում գրանցվել է 126 ծնունդ:

3.qxd 18/02/2025 14:15 Page 4

ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ «ԴԵՄԵՐ» ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԻ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ



Իշխանական սայլ

/սկիզբը՝ էջ 1-ում/

Գյուղի հին անունն անհայտ է: Միջնադարում (9 - 17-րդ դարեր) այն անվանվել է Կոթ ու Սյունյաց Գրիգոր Սուփան իշխանի ու նրա հաջորդների օրոք համարվել իշխանանիստ բնակավայր: Ներքին Գետաշենի պատմամշակութային մեծաթիվ արժեքների մեջ բացառիկ ու անկրկնելի է Իշխանագետի արեւելյան կողմի բարձունքի վրա վեր խոյացող հռչակավոր Կոթավանքը, որը կառուցվել է 9-րդ դարում, Սյունյաց Վասակ Գաբուռն իշխանի որդի Գրիգոր Սուփանի կողմից: Այն համարվում է միջնադարյան հայ ճարտարապետության գլուխգործոցներից մեկը: Կոթավանքն իր ժամանակին համարվել է նշանավոր դպրանոց, իսկ իր անառիկ ու բարձր դիրքի շնորհիվ նաեւ պաշտպանական դեր է կատարել թշնամական ներխուժումների ժամանակ: Կոթավանքի շրջակայքում, նշանավոր մյուս եկեղեցու՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու պատերի մեջ ու ներսում գտնված հարյուրավոր տապանաքար-խաչքարերը եւս դասվում են հայ դեկորատիվ-կիրառական արվեստի գլուխգործոցների շարքում:

Ի դեպ, ինչպես վկայում է միջնադարյան հայ նշանավոր պատմիչ, եկեղեցական հայտնի գործիչ Ստեփանոս Օրբելյանը, Կոթ քաղաքը Գեղարքունիք գավառի հարյուրից ավել բնակավայրերի մեջ եղել է Տաթեւի վանքի ամենախոշոր հարկատու բնակավայրը՝ 20 չափաբաժնով, ինչը նշանակում է, որ միջին դարերում էլ այն եղել է վաճառաշահ, բազմամարդ ու ծաղկուն, ռազմավարական կարեւոր նշանակության բնակավայր:

Ալպյան հարուստ մարգագետինները նպաստել են անասնապահության ու մեղվաբուծության զարգացմանը: Իշխանագետի ու Սևանա լճի մշտառատ ձկնապաշարը ևս գրավիչ է եղել բնակչության համար: Սակայն Ներքին Գետաշենի հարատեւ ընթացքի ու կենսունակության գլխավոր լծակը նրա աշխարհագրական դիրքն է, միջազգային քարավանային ճանապարհների խաչմերուկում գտնվելու բախտավորությունն ու դժբախտությունը: Բախտավորություն կարել է համարել այն, որ միջազգային առեւտրի շնորհիվ բնակավայրը ծաղկման ու զարգացման մեծ հնարավորություններ է ունեցել, իսկ դժբախտություն կարելի է համարել այն, որ այստեղով անցել են ոչ միայն արեւմուտքից արեւելք ու հարավից հյուսիս եկող-գնացող առեւտրական ու քարավանային ճանապարհները, այլ նաեւ՝ դաժան ու ագահ նվաճողների գիշակեր բանակները, որոնք իրենց հետեւից սփռել են միայն մահ ու ավեր:

Իրավամբ, Ներքին Գետաշենի պատմության ու նրա պատմամշակութային հուշարձանների բովանդակությունն ամբողջացնելու համար մարդկային մեկ կյանքն անգամ չի կարող բավարար լինել, քանի որ հայ ժողովրդի հնագույն բնակավայրերից մեկը հանդիսացող այս տարածքում հազարամյակների կյանք է կերտվել՝ իր մեջ ամփոփելով տարբեր մշակույթների հետքեր, որոնց հիմնական մասը թաղվել է հողի հաստ շերտի տակ, եւ դրանք առ այսօր հայտնաբերման, պեղման, համակողմանի ուսումնասիրման ու հավաստի մեկնաբանման կարիք ունեն:

Այժմ կփորձենք մեկ հոդվածի շրջանակներում ամբողջացնել Ներքին Գետաշենի «Դեմեր» դամբարանադաշտում կատարված հնագիտական պեղումների եւ ուսումնասիրությունների համառոտ արդյունքները:

«Դեմեր» հանդամասը, որն այսօր արդեն վերածվում է բնակեցված մի մեծ թաղամասի, գտնվում է Ներքին Գետաշեն գյուղի հյուսիսարեւմտյան կողմում, Երեւան-Մարտունի-Վարդենիս ավտոմայրուղու աջ թեւում, Լիճք գյուղի հետ սահմանաբաժանում: Մի քանի հեկտար տարածքի վրա, դեռեւս անցած դարի 1980-ական թվականներին, այստեղ խիտ շարքերով, իրար բավականին մոտիկ բարձրանում էին շրջանաձեւ շարվածքով ու մեծ չափերի դամբարանները, որոնց տեղում այժմ զբաղեցնում են ժամանակակից շինությունները, իսկ նրանց կողքերում տեղ-տեղ նկատելի են բաց դամբարանների հետքերը:

Այդ դամբարանադաշտում ժամանակին կառուցված են եղել հարյուրավոր քարաշար դամբարաններ, որոնք վերաբերում են մ.թ.ա. 21 – 8-րդ դարերին, ինչը հստակ փաստում է, թե որքան խիտ բնակչություն է ունեցել Սևանա լճի ավազանի հարավային հատվածն ու Արգիճիի կամ Իշխանագետի հովիտը:

«Դեմեր» դամբարանադաշտում 1905-1906 թվականներին նախնական պեղումներ է իրականացրել հայ մեծանուն հնագետ – ազգագրագետ Երվանդ Լալայանը: 1988- 1990 թվականներին «Դեմեր» դամբարանադաշտում պեղումներ է իրականացրել ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական արշավախումբը Աշոտ Փիլիպոսյանի ղեկավարությամբ՝ շուրջ 50 դամբարաններից դուրս բերելով հնագիտական կարեւոր արժեք ներկայացնող բազմաթիվ նյութեր: Պեղումների պատվերն իջեցվել էր պետության կողմից, քանի որ այդ տարածքում նախատեսված էր կառուցել երկաթբետոնյա կոնստրուկցիաների գործարան, որը պետք է զբաղեցներ դամբարանադաշտի հիմնական հատվածը: Հնագիտական հույժ կարեւոր արժեքները փրկելու համար էլ պետությունը հոգաց պեղումների ողջ ծախսերը: Աշոտ Փիլիպոսյանի վկայությամբ՝ ,Դեմերիե դամբարաններից դուրս են բերվել բավականաչափ խեցեղեն, բրոնզե ու երկաթե կենցաղային իրեր, զենքեր, պերճանքի առարկաներ, մարդկանց ու կենդանիների ոսկորներ և այլ նյութեր: Պեղված նյութերի ուսումնասիրությունները փաստել են, որ սույն դամբարանադաշտը գործել սկսել է Քրիստոսից առաջ 21-րդ դարից մինչեւ Քրիստոսից առաջ 8-րդ դարը, մինչեւ Վանի թագավորության նվաճումները Սեւանա լճի ավազանում: Այդ ուսումնասիրությունների արդյունքներն առաջիկայում կհարատարկվեն առանձին գրքով ու կդառնան հանրության սեփականությունը:

Պեղված դամբարան

Տողերիս հեղինակին ժամանակին բախտ է վիճակվել՝ ներկա գտնվելու դամբարաններից մեկի բացմանը եւ հարցազրույց վարելու պեղող հնագետի հետ: Բացված դամբարանից գտնվել էին 27 երիտասարդ տղամարդկանց կմախքներ՝ բոլորը ջախջախված գանգերով: Հնագետի եզրակացությամբ՝ տվյալ դեպքում մենք գործ ունենք միջցեղային բախումների արդյունքում սպանված ռազմիկների կամ անձանց հետ:

Բացվել են նաեւ մեծատոհմիկների դամբարաններ, որտեղ բարձր դասի մարդկանց կողքին թաղված են եղել նաեւ նրանց ընտանիքների անդամները, սպասավորները, պաշտամունքի առարկա հանդիսացող ընտանի կենդանիները: Դամբարաններից դուրս բերված հնագիտական նյութերը հստակ պատկերացում են տալիս նաեւ վերոնշյալ դարաշրջաններում Սեւանա լճի ավազանում բնակվող մարդկանց զբաղմունքի, կենցաղավարության, հավատալիքների, դասակարգային ու միջցեղային հարաբերությունների, արհեստների, ծեսերի ու սովորույթների մասին:

Իսկ «Դեմերի» դամբարանների առաջին պեղող հնագետը հայ իրականության մեջ եղել է Երվանդ Լալայանը՝ մեզանից շուրջ մեկ դար առաջ լույս աշխարհ հանելով հնագիտական ու պատմագիտական նշանակության չափազանց կարեւոր արժեքներ: Պեղումների արդյունքները ներկայացված են հեղինակի «Դամբանների պեղումները Խորհրդային Հայաստանում» գրքում: Անվանի հնագետն այս դամբարանադաշտում պեղել է հինգ դամբարան՝ իր կողմից թվագրված հինգերորդ, ութերորդ, տասներորդ, տասներկուերորդ ու տասնյոթերորդ դամբարանները:

Հինգերորդ դամբարանի տրամագիծը եղել է 8 մետր, բարձրությունը՝ 1,5 մետր: Այն ունեցել է շրջանաձեւ քարապատ շարվածք: Գերեզմանն ուղղված է եղել հյուսիսից հարավ՝ շրջապատված անտաշ քարերով եւ 2 սալաքարով ծածկված: Գերեզմանի երկարությունը կազմել է 2,10, լայնությունը՝ 1,6, խորությունը՝ 1,2 մետր: Դրա մեջտեղում գտնվել է մի երկարագլուխ կմախք՝ մոտը մի բրոնզե դաշույն, ոտքի եւ թեւի երկուական ապարանջան, շուրջը՝ պպզած վիճակում, 19 երկարագլուխ կմախք, որոնցից երկուսը՝ երեխայի: Երեք կմախք էլ գտնվել է անկանոն կերպով ընկած վիճակում՝ թեւի ոսկորները եւ գանգերը կոտրատված վիճակում: Այդ կմախքների վրա բավականաչափ բրոնզե մատանիներ, ուլունքներ եւ ապարանջաններ են գտնվել:

Ութերորդ դամբանի տրամագիծը եղել է 7, բարձրությունը՝ 2 մետր: Գագաթը եղել է տափակ, քարերի շրջանաձեւ պատվածքով: Գերեզմանն ուղղված է եղել հյուսիսց հարավ՝ պատված անտաշ քարերով եւ ծածկված երկու մեծ քարերով: Երյկարությունը եղել է 2,3, լայնությունը՝ 1,7, խորությունը՝ 1,3 մետր: Գերեզմանի մեջտեղում, հյուսիսից հարավ, պառկած է եղել մի երկարագլուխ կմախք, որի վրա գտնվել է մի բրոնզե գոտի, բրոնզե երկու ապարանջան եւ մի մանյակ: Այդ կմախքի մոտ եղել է նաեւ կանացի երկարագլուխ կմախք, որի վրա գտնվել է երկու բադանման պանդոլոկ եւ բոժոժ:

Տասներորդ դամբանի տրամագիծը եղել է 13, բարձրությունը՝ 1,5 մետր՝ հարթ գագաթով, շուրջանակի մեծ քարերով պատված: Գերեզմանն ուղղված է եղել հյուսիսց հարավ՝ պատված անտաշ քարերով եւ ծածկված երկու մեծ սալաքարով: Երկարությունը եղել է 2,4, լայնությունը՝ 1,8, խորությունը՝ 2 մետր: Գերեզմանի մեջտեղում, երեսներն իրար դարձրած, հյուսիսից հարավ, պառկած են եղել երկու կմախք, որոնց մոտ գտնվել են բրոնզե մի փոքրիկ ու վանակատե երկու դանակ: Սրանց սնարի մոտ գտնվել է գորշուկի կմախք, որի մոտ պառկած դրությամբ գտնվել է մի ձիու եւ էլի մի գորշուկի կմախք ու մի հորթի գլուխ:

Տասներկուերորդ դամբանի տրամագիծը եղել է 13, բարձրությունը՝ 1,5 մետր, հարթ գագաթով, քարերի շրջանաձեւ շարվածքով պատված: Գերեզմանն ուղղված է եղել հյուսիսից հարավ , պատած անտաշ քարերով եւ երեք սալերով ծածկված: Գերեզմանի հյուսիսարեւմտյան անկյունում, պպզած վիճակում, գտնվել է մի երկարագլուխ մարդու կմախք՝ մեջքին մի դաշույն, թեւին՝ ապարանջան, կողքին՝ երկու պուլիկ: Գերեզմանի հարավային կողմում միմյանց վրա թափված են եղել մարդկային 3 կմախք, որոնց գանգերը եղել են ներքեւում, ոտքերը՝ վերեւում:

Լալայանի ենթադրությամբ՝ այդ դիերը, հավանաբար, բռնի կերպով են հջեցվել գերեզման, քանի որ այդ կմախքներից մեկի միջից բրոնզե մի նետ է գտնվել:

Սակայն ամենահետաքրքրական ու ծանրակշիռ, հարուստ նյութերն ապահովել են տասնյոթերորդ դամբանի պեղումները: Սրա տրամագիծը եղել է 18, բարձրությունը՝ 0,5 մետր՝ շրջանաձեւ պատված մանր քարերով: Գերեզմանը եղել է քառանկյունի, արեւելքից արեւմուտք ուղղված չորս կողմն անտաշ քարերով շարված ու յուրաքանչյուր անկյունում փայտե մի սյուն կանգնեցրած: Երկարությունը եղել է 3,2, լայնությունը՝ 2,5, խորությունը՝ 3,3 մետր: Գերեզմանն ամբողջովին լցված է եղել հողով ու ծածկվել 3 մեծ սալաքարերով:

«Երեք կողմի պատերը համեմատաբար բարձր էին, իսկ չորրորդինը, արեւելյանը, փոքր-ինչ ցածր ու ոչ այնքան կանոնավոր շարված, այնպես որ, կարելի է ենթադրել, թե ննջեցյալներին թաղելուց հետո է հապճեպ կերպով շարված: Այս գերեզմանի մեջ, երկարությամբ, գտնվեց ամբողջովին փայտից շինված մի սայլ, որը կոտրված էր: Սրա վրա պառկած էր մի երկարագլուխ կմախք, աջ կողքին, ոտները փոքր-ինչ հետ ծալածև երեսը դեպի հարավ դարձրած: Սրա գանգի վրա կար մի վարսակալ, մեջքին՝ մի լայն գոտի, վրան՝ մի մեծ եւ մի փոքր դաշույն, մի ածելի եւ մի գավաթ, աջ ձեռքին՝ մի ապարանջան և մի մատանի: Կողքին դրված էր մի գայիսոնի գլուխ, իսկ աջ ձեռքին ուներ մի երկժանի: Այս բոլորը, ինչպես եւ այս դամբանի մեջ գտնված մյուս բոլոր իրերը, բրոնզից էին, ու երկաթի ոչ մի հետք չկար: Այս իշխանական կառքի շուրջն անկանոն կերպով ընկած էին 13 մարդկային կմախք, որոնցից շատերի գանգերը ներքեւում էին, իսկ ոտքերը՝ վերեւում: Մի քանի ոսկորներ էլ կոտրտված էին: Պարզ է, որ դրանք վերեւից էին ձգված գերեզմանի մեջ: Այս 13 կմախքների վրա գտնվեցին միայն 30 մատանի, բրոնզե մի օղ, իսկ մյուս կոտրված ոսկորի վրա՝ բրոնզե 3 ապարանջան: Մասամբ սայլի վրա, մասամբ էլ սայլի շուրջը շարված էին 18 մեծ ու փոքր ամաններ:

Սայլի զարդանկար

Սայլի գլխի մոտ, գերեզմանի արեւմտյան կողմում, բացվեցին եզան չորս կմախք, որոնք, հետեւապես, լծված են եղել այդ դիակառքին: Սայլի լծի մոտ, երեսի վրա, ընկած էր մի երկարագլուխ մարդու կմախք, որը, հավանորեն, սայլապանը կարող էր լինել: Լծի մեջտեղում ամրացրած էր սնամեջ, բրոնզե այծյամ, 3 զանգուլիկներով, որ շարժվելիս զնգզնգում է:

Սայլի հյուսիսային կողմը, անիվին մոտ, գտնվեց մի վարազի գանգ և նրա կմախքի մի մասերը,-նկարագրում է Լալայանը:

Այնուհետ հնագետը ներկայացնում է իր հայտնագործության ու ուսումնասիրության արդյունքները, համոզելով ու փաստելով, թե այս մեկ սայլի օրինակով մեր նախնիների կյանքում ինչպես են իրար հետ համատեղվել արհեստները ու արվեստները, զարգացման ինչ մակարդակի վրա է գտնվել մարդկային կյանքը բրոնզեդարյան ու նրան հաջորդող ժամանակաշրջաններում:

/շարունակությունը՝ էջ 5-ում/

3.qxd 18/02/2025 14:15 Page 5

ԾՈՎԻՆԱՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՑԱՌԻԿՈՒԹՅՈՒՆԸ

/Սկիզբը՝ նախորդ համարում/

Նիկողայոս Ադոնցն իր կոթողային «Հայաստանի պատմություն» երկասիրության մեջ հիշատակելով Օձաբերդի արձանագրությունը՝ սխալմամբ այդ երկրների անունները նույնականացնում է որպես թագավորների անուններ, ինչը ոչ ճիշտ թարգմանության արգասիք է. «Սարդուրիի հաջորդ Ռուսան ամրապնդեց Սեւանա լճի ափին տեղադրված չորս երկրների նվաճումը եւ իր իշխանությանը ենթարկեց տասնինը թագավորների, որոնք իշխում էին լճից այն կողմ ընկած լեռներում: Քյոլաղռանի /այն է՝ Ծովինար.-Ա.Հ./ արձանագրությունը խնամքով պահպանել է այդ թագավորների ցուցակը: Փաստերի պակասության պատճառով նույնիսկ մոտավորապես չի կարելի ցույց տալ, թե նրանք որտեղ եւ որ շրջանում են իշխում»: Իրականում Ծովինարի արձանագրության մեջ որեւէ թագավորի անուն հիշատակված չէ, դրանք բոլորն էլ երկրների անուններ են: Այդտեղ տրված է միայն թագավորների քանակը:

Արդի արեւելագետ եւ լեզվաբան Միհեր Քումունցը «Հնդեվրոպական արմատը Գորիս տեղանվան մեջ» հոդվածում անդրադառնալով արձանագրությանը՝ նույնպես կատարել է պատմագիտական սխալ եզրակացություն. «Գորիս տեղանունը առաջին անգամ հիշատակվում է ուրարտական արքա Ռուսա 1-ին (Ք. ա. 735-713 թթ.) արձանագրության մեջ՝ 9-րդ տողում՝ ,...Գուրիայան երկիրը...»: Ռուսա 1-ինը Ք. ա. 715 թ. է ձեռնարկել արշավանք դեպի Գեղարքունյաց ծովի արեւելյան հատված եւ նվաճել 23 երկրներ, որոնցից մեկը եղել է Գորիսը՝ Գուրիայան»: Նախ՝ Գորիսը Սեւանի արեւելյան հատվածում չէ, երկրորդը՝ Ռուսան Գուրիայա երկիրը ներկայացնում է լճից հյուսիս եւ ոչ արեւելք: Քումունցի համար հիմք է հանդիսացել Հ. Կարագյոզյանի կարծիքը («Արեւելյան Հայաստանի ուրարտական տեղանունները», 1978):

Գիտնականների մեծ մասը Սարդուրիի հիշատակած Ուրտեխե /Ծովակի արձանագրություն/ եւ Ռուսայի՝ Ադախու երկրամասերը նույնականացնում են Արցախի հետ, սակայն ուսումնասիրողներից ոչ ոք ցայսօր ուշադրության չի արժանացրել Արցախի Տրտու /Թարթառ/ գետի եւ նրա աջակողմյան վտակ Դուքխու–Դուտխու /Թուքխուն/ անվանումների ուրարտական տառադարձության վրա, ի մասնավորի՝ Տուտու-Տրտու, ինչպես նաեւ Արկուկի-Արգիշի անվանումներին: Հատկանշական է, որ ուրարտագետների կողմից աչքաթող է արվել նաեւ Ստեփանոս Օրբելյանի՝ Սյունյաց եկեղեցուն հարկատու Սոդք-Ծարի բնակավայրերի մի շարք անվանումների նմանությունը Ծովինարի արձանագրության մեջ հիշատակվող երկրների անվանումներին, օրինակ. Գուրկուշիլե-Գուկառինճ, Տուտուայան-Տրետուք, Ծամա-Ծար, Երկիլայան-Երերի, Բերզիրա- Երեզ եւ այլն:

Ծովինարի արձանագրության երկրորդ բացառիկ կարեւորությունը կարծում ենք այն է, որ այն հանդիսանում է Թեյշեբաինի քաղաք-ամրոցի /Օձաբերդ/ հիմնադրման կենդանի վավերագիրը, չնայած որ ամրոցի տարածքում կան նաեւ մինչուրարտական շրջանի կիկլոպյան շինություններ:

Ծովինարի արձանագրության երրորդ կարեւորագույն գործոնը պատմության աղբյուրագիտական տվյալն է առ այն, թե Ք.ա. 8-րդ դարում Սեւանի ավազանն ինչ հարուստ քաղաքակրթական, սոցիալ-քաղաքական եւ տնտեսական նկարագիր է ունեցել: Սեւանի ավազանի կիկլոպյան ամրոցների եւ ուրարտական սեպագիր արձանագրությունների մեծ մասը փաստում են, որ լճի հարավային եւ արեւելյան ափերը ավելի բնակեցված ու հայտնի են եղել, քան հյուսիսայինը, եւ Ռուսա I-ի Ծովինարի արձանագրությունն է, որ համոզում է հակառակը: Ընդ որում՝ արձանագրության մեջ 23 երկրների թվարկումը եւ երկու անգամ «ծովային գավառում» հղումը հաստատում է, որ Ռուսայի տված նկարագրությունը ամբողջապես համապատասխանում է այժմյան Գեղարքունիքի մարզի տարածքին, որպես լեռնային գոգավորություններով առանձնացած բնաշխարհ: Ուդուրե Եթիուխե ձեւով Սեւանի ավազանն առաջին անգամ հիշատակվում է Արգիշտի I-ի խորխոռյան տարեգրության մեջ. «Կտրում էի մինչեւ... Ուդուրե Եթիուխե», սակայն դրա մասնակի նվաճման մասին խոսում է նրա հաջորդը՝ Սարդուրի II-ը. «Խալդեն արշավեց, սեփական զենքին ենթարկեց չորս արքաների Ուդուրե-Եթիունյան երկրում»: Ինչու մասնակի, քանզի նշելով չորս արքա, այնուհետեւ արձանագրում է երեք ցեղի կամ երկրի անուն /մեկը վնասված է/ եւ ոչ քսաներեք, ինչպես Ռուսա I-ը:

Ռուսան կամ Ռուշան, որ ասորեստանյան արձանագրություններում բազմիցս հիշատակվում է Ուրսա ձեւով, ինչպես նաեւ հայտնի է նրան տրված մականուններ՝ Ուեդիպրի-Վեդիպրի եւ Յայա, ունեցել է փոփոխական բախտ: Նրա վարած ներքին եւ արտաքին քաղաքանակությունը կարոտ է առանձնահատուկ լուսաբանման եւ գիտական ուսումնասիրության, որտեղ միանշանակ առանցքային դերակատարում ունի Վեդուրի Էթիունին՝ Սեւանի ավազանի Ք.ա. 8-րդ դարի հայոց պատմությունը:

Ատոմ Հակոբյան

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ «ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում տեղի է ունեցել «Սեւանա լճի պահպանության հարթակ» նախաձեռնության միջոցառում, որի ընթացքում Մարտունի եւ Վարդենիս համայնքները ներկայացնող 28 մանկավարժ վերապատրաստվել են նախադպրոցական ուսումնական հաստատությունների ավագ խմբի մանկավարժների համար նախատեսված «Սեւանա լճի պահպանություն» ձեռնարկով:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, միջոցառման մասնակիցներն ուսումնասիրել են բնապահպանական ձեռնարկը, հարցուպատասխանների եւ քննարկումների տեսքով հստակեցրել հետագա անելիքները՝ նախադպրոցական տարիքի երեխաների մոտ էկոհամակարգի մասին անհրաժեշտ ու պահանջվող գիտելիքներ ձեւավորելու համար:

Միջոցառումը կազմակերպվել էր Եվրոպական Միության եւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության եւ զարգացման նախարարության համաֆինանսավորմամբ իրականացվող «Սեւանա լճի շրջակա միջավայրի պահպանություն» ծրագրի կողմից: Ծրագիրն իրականացնում է Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերությունը:

«Գեղամա աշխարհ»

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՓԵՏՐՎԱՐԻ ՍԿԶԲԻ ՀԱՄԵՄԱՏ ԲԱՐՁՐ Է ՄՆՈՒՄ 21 ՍԱՆՏԻՄԵՏՐՈՎ

2025 թվականի փետրվարի սկզբին Սեւանա լճի մակարդակը ծովի մակերեւույթից գտնվել է 1900 մետր 36 սանտիմետր բարձրության վրա, ինչը 21 սանտիմետրով բարձր է նախորդ տարվա փետրվարի սկզբին գրանցված 1900 մետր 15 սանտիմետր նիշից:

Ինչպես տեղեկացրին ՀՀ ՇՄՆ «Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ տեղեկագրից, 2025 թվականի հունվար ամսին Արփա-Սեւան թունելային ջրատարով, ներառյալ ստորերկրյա հոսքը, Սեւանա լիճ է տեղափոխվել 1 միլիոն 860 հազար խորանարդ մետր ջուր:

Սեւանա լիճ թափվող գետերը գտնվում են ձմեռային սակավաջուր փուլում:

ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ «ԴԵՄԵՐ» ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԻ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

/սկիզբը՝ էջ 4-ում/

Ըստ Լալայանի՝ Ներքին Գետաշենի Վերին Դեմեր հատվածից գտնված իշխանական սայլը շատ նման է եղել անցած դարի 20-ական թվականներին Անդրկովկասի շատ վայրերում գործածվող սայլերին: Այն բաղկացած է եղել երկու քառանկյունի թեւերից, որոնք ամրացվել են երկու միանման անիվների վրա: Այն տարբերվել է ժամանակակից սայլերից միայն նրանով, որ ունեցել է հետեւի երկու անիվներից ավելի փոքր երրորդ անիվը՝ առաջնամասի նեցուկի փոխարեն: Սայլի փայտե երկու կողերի վրա բարձրացել են փայտե թեւեր, որոնք միացել են առ ի շեղ ձգված մի ձողով ու ծածկված եղել գեղեցիկ կերտվածքով: Ամեն մի անիվը բաղկացած է եղել երեք կտորից, որոնք իրար միացած են եղել փայտե սեպերով: Անիվի միջին տախտակի մեջ ծակ է արվել առանցքի համար, որի ծայրն ամրացված է եղել վերեւից ներքեւ խփված փայտերով այնպես, որ ոչ թե անիվն է պտտվել, այլ՝ առանցքը, ինչպես որ ժամանակակից սայլերի պարագայում է: Հետեւի անիվների տրամագիծը կազմել է 95 սանտիմետր: Սայլի առանցքը եղել է կլոր, 12 սանտիմետր տրամագծով, իսկ գերանն ունեցել է 1,8 մետր երկարություն: Առաջին անիվը, որը փոքր է եղել հետիններից, ունեցել է 60 սանտիմետր տրամագիծ և պտտվել է երկու կողերի ծայրերին անցկացրած առանցքի շուրջը:

Կողերի վրա, հետին անիվներին մոտ, ամրացված է եղել կես մետր երկարությամբ փայտե մի բարձ, որի միջով անցել են զուգահեռական երկու սեպերը: Երկու կողերի վրա փռված են եղել տախտակներ, իսկ սայլի թեւերը ծածկված են եղել պարուրաձեւ փորվածքներով և գեղեցիկ զարդանկարներով: Լուծը միանգամայն նման է եղել հայկական ժամանակակից սայլի լծին. այն եղել է մի քառանկյունի փայտ, որի ծայրին անց են կացվել փայտե սամեր:

Իսկ թե ինչ ճակատագրի է արժանացել իշխանական սայլը, խոսքը կրկին տանք հեղինակին. «Սայլի փայտը սաստիկ փտած էր ու ձեռք տալիս անմիջապես փշրվում էր: Նկատելի էր, որ այն կոտրված վիճակում էր ձգված գերեզմանի մեջ: Ես մեծ խնամքով հավաքեցի սայլի բոլոր կտորները, տարա Թիֆլիս, Հայոց Ազգագրական Ընկերության թանգարանը եւ քանդակագործ Վարձիգուլյանի հետ աշխատեցի ամբողջը վերականգնել եւ նկարել: Սակայն ստիպված էի միայն բավականանալ նկարներով, որովհետեւ չափազանց փտած լինելու պատճառով անհնար եղավ այն վերականգնել: 1921 թվականին սրա կտորները բամբակի մեջ փաթաթելով՝ տեղափոխեցի Երեւան՝ Պետական թանգարան»,- վկայում է Երվանդ Լալայանը:

Սայլի զարդանկար

Անշուշտ, Ներքին Գետաշենի տարածքում գտնվող դամբարանները, որոնք մինչ օրս մնում են չպեղված ու չուսումնասիրված, իրենց մեջ պահպանում են բազմաթիվ խորհրդավոր ու արժեքավոր գաղտնիքներ, որոնք սպասում են հնագետների նոր սերնդին, իրենց բացահայտվելու ժամանակին:

Խոսրով Խլղաթյան

3.qxd 18/02/2025 14:15 Page 6

ՓԱՍՏԵՐ ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱՍԻՆ



1.Սեւանա լճի հասակը հաշվվում է մոտ 25 հազար տարի:

2.Սեւանա լիճ են թափվում 30 գետ եւ գետակ (այդ թվում՝ երկու խոշոր աղբյուրներ), որոնց գումարային ելքը կազմում է 24 խորանարդ մետր վայրկյան: Ամենաջրառատ գետն Արգիճին է՝ 5.38 խորանարդ մետր վայրկյան տարեկան միջին ելքով:

3. Բնական վիճակում Սեւանա լիճ մուտք գործող ջրի 92 տոկոսը գոլորշանում է:

4. Լճի երկարությունը մեծ առանցքով Ձկնագետի գետաբերանից (հյուսիս-արեւմուտքում) մինչեւ Ծովակ գյուղը (հարավ-արեւելքում) կազմում է 74 կմ, միջին լայնությունը՝ 19.2 կմ (ամենամեծ լայնությունը առանցքի նկատմամբ 32կմ է),

5. Սեւանա լիճը հանքայնացման մակարդակով դասակարգվում է որպես քաղցրահամ լիճ, լճի ջուրը պատկանում է հիդրոկարբոնատային դասի մագնեզիումային խմբի առաջին տիպին:

6. Դիտարկումների պատմական տվյալների համաձայն, տարեկան կտրվածքով Սեւանա լճի մակարդակն ամենից շատ՝ 131 սմ-ով, իջել է 1961 թվականին, իսկ ամենից շատ բարձրացել է 1988 թվականին՝ 72 սմ-ով:

7.Հայաստանում մեկ տարվա ընթացքում ձեւավորվող վերականգնվող ջրային ռեսուրսները (գետային հոսքը) համարժեք է Սեւանա լճի մոտ 6 մ հաստությամբ ջրի շերտի:

8. Լճում ափասառույց ձեւավորվում է ամեն տարի, սակայն լիճը համատարած սառույցով ծածկվում է ոչ ամեն տարի: Վերջին տարիներին ամենաինտենսիվ համատարած սառցակալում դիտվել է 2008 թվականին:

9. Սեւանա լճի ջրի ջերմաստիճանը մակերեւույթին տարվա մեջ միջինը կազմում է շուրջ 9 աստճան ցելսիուս, ամռան-աշնան ընթացքում շուրջ 80-100 օր մակերեւութային շերտը ունի ավելի քան 18 աստիճան ցելսիուս ջերմաստիճան:

10. Մինչեւ մակարդակի արհեստական իջեցումը, Բայկալ, Ժնեւ, Իսիկ-Կուլ լճերի հետ միասին Սեւանը համարվել է աշխարհի ամենաթափանցիկ լճերից մեկը, թափանցիկությունը բնական վիճակում կազմել է շուրջ 21 մետր:

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՎ» ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՍՏԱՑԵԼ ԵՎՍ 14 ՇԱՀԱՌՈՒ

ԵՀԽ «Հայաստանյան Կլոր Սեղան» հիմնադրամը, Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի եւ «Art House» ուսումնական կենտրոնի հետ համատեղ, շարունակում է իրականացնել «Տնտեսական ակտիվացման ծրագիրը», որի շրջանակում բազմամսյա մասնագիտական կրթություն են ստանում Մարտունի համայնքում բնակվող կանայք:

Հերթական փուլում կազմակերպված կարուձեւի մասնագիտական դասընթացներին ընդգրկված էին 14 շահառու՝ ինն արցախից բռնի տեղահանված եւ հինգ տեղացի կանայք:

Օրերս Մարտունու համայնքապետարանում տեղի է ունեցել եռամսյա տեսական եւ գործնական դասընթացներն ավարտած մասնակիցներին վկայագրերի հանձնման արարողությունը, եւ, որպես աջակցության մաս, նրանց տրամադրվել են նաեւ աշխատանքային գործիքներ:

«Ծրագիրը շարունակվում է. մեկ այլ խմբում մասնակիցներն ուսանում են հրուշակագործություն»,-հավաստեց Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչը:

«Գեղամա աշխարհ»

ԿԱՅԱՑԵԼ Է ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 7-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԸ

Կայացել է Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի ավագանու 7-րդ նստաշրջանի առաջին նիստը, որը վարել է Սեւան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանը:

Ներկայացված օրակարգային հարցերի հաստատումից առաջ Սեւան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանն անդրադարձել է 2024 թվականին համայնքում իրականացված աշխատանքներին:

-Իրականացված աշխատանքների շնորհիվ ակնառու են գրանցված ցուցանիշները, որի համար շնորհակալություն եմ հայտնում համայնքապետարանի աշխատակազմին, ավագանու անդամներին, համայնքի բնակիչներին, այն կազմակերպություններին եւ անհատներին, որոնք իրենց գործունեությամբ նպաստել են համայնքապահպան ծրագրերի կյանքի կոչմանը, համայնքի բնականոն կյանքի ապահովմանը,- նշել է համայնքի ղեկավարը:

Սեւան համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման եւ 2024 թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը Սեւան համայնքի ավագանին ընդունել է ի գիտություն:

Ավագանու մեկ այլ որոշմամբ համայնքի ավագանին հաստատել է Սեւան համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը:

Համապատասխան որոշումներով հաստատվել են համայնքի ավագանու քննարկմանը ներկայացված՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց սկսելու», «Սեւան համայնքի ավագանու կանոնակարգը նոր խմբագրությամբ հաստատելու», «Սեւան համայնքի բնակավայրերի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողատարածքների՝ 2025 թվականին օգտագործման տրամադրվող վարելահողերի, արոտավայրերի եվ խոտհարքերի համար մրցութային մեկնարկային գին սահմանելու», «Սեւան համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման 2025 թվականի (ամենամյա) ծրագիրը հաստատելու», «Սեւան համայնքի Սեմյոնովկա բնակավայրում գտնվող ՕԿՋ-ի եւ կապտաժի կառուցման համար նախատեսված հողատարածքը Հայաստանի Հանրապետությանը նվիրատվությամբ հանձնելու», «Սեւան համայնքի Դդմաշեն բնակավայրի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կանոնադրության մեջ կատարված փոփոխությունը հաստատելու», «Սեւանի համայնքապետարանի, համայնքային ոչ առեւտրային կազմակերպությունների եւ Սեւանի բիզնես կենտրոնի 2024 թվականի գույքագրման արդյունքները հաստատելու», «Սեւան համայնքի տեղական ինքնակառավարման մարմնում տեղական հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիրը հաստատելու», «Սեւան համայնքում սոցիալական աջակցության ոլորտի սոցիալական ծառայությունների տրամադրման տեսակները, սոցիալական աջակցություն ստացող խմբերի ցանկը եւ չափորոշիչները սահմանելու», «Սեւան համայնքի կողմից «Կոտայքի եւ Գեղարքունիքի մարզի կոշտ թափոնների կառավարման կենտրոնում» լիազորված ներկայացուցիչ նշանակելու» մասին հարցերը:

Համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանն անդրադարձ է կատարել համայնքում աղբահանության դիմաց գանձվող վարձավճարներին՝ նշելով, որ «Սեւան համայնքի կոմունալ սպասարկում եւ բարեկարգում» ՀՈԱԿ-ը, չնայած առկա խնդիրներին եւ հնարավորություններին, անում է հնարավորը, որպեսզի աղբահանությունը կատարվի ժամանակին, համայնքն ունենա ներկայանալի տեսք: Ուստի եւ բնակիչները, տնտեսվարող սուբյեկտներն ու իրավաբանական անձինք չպետք է մոռանան իրենց պարտականությունները՝ ժամանակին կատարելով վճարումներ:

Ավագանու նիստի ընթացքում քննարկվել են նաեւ համայնքի ավագանուն հասցեագրված դիմումները, որոնց տրվել են սպառիչ պատասխաններ՝ համապատասխան որոշումների ընդունմամբ:

Սեւան համայնքի ավագանու 7-րդ նստաշրջանի 2-րդ նիստը տեղի կունենա 2025 թվականի մարտի 12-ին:

Արմինե Ղուկասյան

ԿԱՅԱՑԵԼ Է ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԸ

Կայացել է Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի առաջին նիստը, որը վարել է Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանը:

Նիստի օրակարգում ընդգրկված հարցերի հաստատումից հետո համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման եւ հավաքագրման բաժնի պետ Տիգրան Բրսիկյանը ներկայացրել է «Գույքահարկի գծով արտոնություններ սահմանելու մասին» հարցը:

«Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքն աճուրդով օտարելու եւ մեկնարկային գին սահմանելու», «Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքերը գնահատելու եւ աճուրդային կարգով օտարելու», «Անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրերի գործողության ժամկետները երկարաձգելու», «Համայնքային սեփականություն հանդիսացող խանութը եւ սպասարկման համար նախատեսված հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու», «Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարելու եւ «Կոտայքի եւ Գեղարքունիքի ԿԿԹԿԵ ՍՊԸ-ում համայնքի լիազորված ներկայացուցիչ նշանակելու» մասին հարցերը զեկուցել է համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արա Գեւորգյանը:

Աշխատակազմի քաղաքաշինության եւ հողաշինության բաժնի պետ Դավիթ Մազմանյանը ներկայացրել է «Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարելու մասին» հարցը:

«Դրամական աջակցություններ տրամադրելու մասին» հարցը զեկուցել է համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Վարսենիկ Խաչատրյանը:

Համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման եւ հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ Լիլիթ Բաբինյանը զեկուցել է «2024 թվականի գույքագրման եւ դուրսգրման ենթակա հիմնական միջոցների եւ փոքրարժեք արագամաշ առարկաների փաստաթղթերի հաստատման մասին» հարցը:

«Ծաղկաշեն բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, օգտագործման սահմանափակումներ չունեցող, գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը մրցութային կարգով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու եւ տարեկան վարձավճար սահմանելու մասին» հարցը ներկայացրել է համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության եւ բնապահպանության բաժնի պետ Արծրուն Ղուրշուդյանը, իսկ «Գույքահարկի գծով արտոնություններ սահմանելու եւ սահմանված արտոնությունները Գավառ համայնքի 2024 թվականի բյուջեից փոխհատուցելու մասին» հարցը՝ ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման եւ հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Գեւորգ Աղլամազյանը:

Որոշվել է նաեւ հաջորդ նիստի օրն ու ժամը. այն տեղի կունենա 2025 թվականի մարտի 10-ին:

Օրակարգում ներառված բլոր հարցերը հաստատվել են քվեարկությամբ:

Ավագանու նիստին մասնակցել են նաեւ «ՔՀԿ-ների կարողությունների զարգացում» ենթադրամաշնորհի շրջանակներում իրականացվող «ՏԻՄուսույց» ծրագրի երիտասարդները:

Ալվարդ Մանուկյան

3.qxd 18/02/2025 14:15 Page 7

ԴՈՒՆՈՒՇԸ

/սկիզբը՝ նախորդ համարներում/

«Ադոն գերի է հանձնվել ֆաշիստներին, Ադոն դավաճան է, Ադոյի դիմակը պատռվել է»: Այս մտքերը զայրացնում էին համագյուղացիներին եւ նրանք բոլոր դեպքերում նողկանքով էին խոսում Ադոյի մասին: Վերհիշում էին, թե ինչպես գյուղսովետի նախագահ աշխատելու ժամանակ Ղազարի Հարոյի կողմից հարկերը ժամկետից շուտ չմուծելու պատճառով Ադոն բարձրանում է նրա տան կտուրը եւ բահով քանդում հողե ծածկը՝ սպառնալով, որ տունը փուլ կածի տանեցիների գլխին: Նա իր այդ չարագործությունը դադարեցնում է համագյուղացիների մասսայական խնդրանքով եւ Հարոյի ծնկաչոք աղաչանքով ու ոտները պաչելով:

Պատմում էին, որ Հովհաննեսի ինը տարեկան տղային բանտարկել է տալիս երկու տարի ժամկետով՝ քաղցածության պատճառով կոլտնտեսության բոստանից ութ հարյուր գրամ կարտոֆիլ վերցնելու համար: Նա այդ քաղցած երեխայի արարքը ակտավորում է որպես համաժողովրդական ունեցվածքի հափշտակություն եւ ներկայացնում դատական մարմիններին: Երեխան պատիժը կրելուց հետո ազատվում է ծանր հիվանդ վիճակում եւ մեռնում մի քանի տարի հետո:

Հիշում էին այն դեպքը, որ Ադոն գաղտնի խեղդել էր իր ծերացած եղբոր միակ նորածին երեխային, որպեսզի ծխի տեր չդառնա՝ եղբոր ունեցվածքը հետագայում իրեն մնալու նպատակով: Մտաբերում էին, թե ինչպես նա նախանձից գաղտագողի այրել էր իր հարեւանի ցորենի բարդոցները, դրանից առաջ թունավորել էր քավորի եզներին, ոտների տակ ծեծել էր յոթանասունհինգամյա մի կնոջ այն բանի համար, որ իրեն անվանել էր անխիղճ մարդ: Շատերն էլ մեղադրանքով էին խոսում իշխանության ղեկավարների մասին, որ Ադոյի նման մարդկանց պաշտոն են տալիս եւ ժողովրդի բախտը կապում նրանց հետ:

Դունուշի վիշտը չէր փարատվում: Թվում էր, թե Ադոյի դիմակը բացող լուրերը պետք է ինչ-որ չափով ուրախացնեին նրան, սակայն այդ լուրերն էլ չսթափեցրին դժբախտ կնոջը, քանի որ Տիգրանին բանտարկելը, Հայկի մահը եւ Միշայի նամակների ուշանալը մի անվերջանալի մրմուռ էին ստեղծել նրա սրտում, որը տանջում էր ու տանջում խեղճ կնոջը: Նահապետական գեղջկուհու մտածելակերպով նա Աստծուն խնդրում էր, որ իր հոգին չառնի, մինչեւ չտեսնի Տիգրանին ու Միշային:

-Տեր Ամենակարող,- մրմնջում էր Դունուշը,- աչքս մեկ անգամ էլ առնի ղարիբներիս, ու հոգիս առ, մեռցրու ինձ եւ տեղավորիր հանգուցյալ Հայկիս ծոցը:

Հետագայում Դունուշին եւ համագյուղացիներին հայտնի դարձավ, որ պատերազմի ժամանակ Բելոռուսիայի մի գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ծանր վերք է ստանում իրենց հարեւան Մկոյի որդի Համոն: Նա չի կարող նահանջել եւ գյուղի ծայրին պառկում է փլված շենքի պատի տակ: Այդ բանը նկատում են փլված տան հարեւանի կինն ու աղջիկը, որոնք կարողանում են վիրավոր զինվորին տեղափոխել իրենց տունը եւ թաքցնել: Նրանք խնամքով պահում ու բուժում են Համոյին: Սակայն գյուղը գրաված ֆաշիստները մի քանի օր հետո իմանում են Համոյի տեղը եւ սովետական ուրիշ վիրավոր զինվորների հետ, որոնք Համոյի նման չէին կարողացել նահանջել, ավտոմեքենայով տանում են որպես գերիներ: Որոշ ժամանակ անց վիրավոր գերիները ապաքինվել էին եւ կարող էին աշխատել: Գերմանացիները նրանց տեղավորեցին Լեհաստանում ստեղծած իրենց ճամբարներից մեկում: Այդտեղ էլ Համոն հեռվից տեսավ Ադոյին՝ գերմանական սպայի համազգեստով, ավագ լեյտենանտի տարբերանշաններով, ատրճանակը կողքին կապած: Նա սկզբում ուզեցավ մոտենալ Ադոյին եւ զրուցել նրա հետ: Սակայն իսկույն կողմնորոշվեց, որ հնարավոր է իր գլուխն էլ ուտի, խույս տվեց նրանից եւ բոլոր դեպքերում չերեւաց դավաճանի աչքին:

Համոն ականատես եղավ, թե ինչպես գերմանական ճամբարի պարետ Ադոն ծեծում ու պատժում էր գերված սովետական զինվորներին: Մոլեռանդորեն ծառայում էր ֆաշիստներին եւ պատրաստվում էր դառնալ լեգեոնի ղեկավար եւ կռվել սովետական բանակի դեմ: Ադոն ճամբարում հանդիպել էր համագյուղացի Հովեին եւ առաջարկել նրան, որ ցուցակագրվի լեգեոնի կազմում եւ կոչ անի մյուսներին՝ հետեւել իր օրինակին: Սակայն Հովեն ոչ միայն մերժել էր նրան, այլեւ արհամարանքով ծաղրել էր ու զզվանքվ հեռացել նրանից: Հենց այդ պահին Ադոն ատրճանակի երեք հարվածով սպանել էր համագյուղացուն եւ կարգադրել դիակը քարշ տալ ինչ-որ տեղ: Համոն ականատես էր եղել նաեւ այդ վայրագությանը եւ լցվել այրող վրեժով: Նա խորապես համոզված էր, որ Ադոն իրեն եւս կվերացնի, եթե իմանա, որ իր համագյուղացին է: Այդ պատճառով էլ Համոն ուշադրությամբ թաքնվում էր նրա աչքից եւ հետեւում նրա գործողություններին:

Համոյին հաջողվել էր իմանալ, որ դավաճան Ադոն անցել էր գերմանական սպայական դասընթացներ եւ ընդունել նրա համար սահմանված երդումը, դարձել ֆաշիստական բանակի սպա: Համակենտրոնացման ճամբարի պետի տեղակալներից մեկը Հանս-Արիս անունով մի սպա էր, որը ղեկավարում էր ռազմագերիների գերմանական օբյեկտներում աշխատանքի գործը: Նրա մունդիրից երեւում էր, որ ունի կապիտանի աստիճան: Հանս-Արիսը դաժանություններ չէր անում, խղճում էր գերիներին, օգնում հիվանդներին: Նրան հարգում էին գերիները եւ սիրով կատարում նրա հրամանները:

Մի քանի ամիս համակենտրոնացման ճամբարում աշխատելիս Հանս-Արիսը ձեռք էր բերում ճանաչում եւ հեղինակություն: Նրան հարգում ու գնահատում էին նաեւ գերմանական սպաները, որոնք հիմնականում կասկածամտություն էին ցուցաբերում իրար նկատմամբ: Նա ոչ ոքի կողմից չէր կասկածվում եւ գործում էր ազատ ու համարձակ: Նրա հրամանատարությամբ երեք հարյուր հիսուն ամրակազմ եւ դիմացկուն գերիներ, որոնք նախօրոք ընտրված էին, հետիոտն շարքով տեղափոխվում էին աշխատանքի մի օբյեկտ՝ կտրելով երկար ճանապարհ: Հոգնածներին օգնում էին ուժեղները, եւ գերիների շարքը քայլում էր անծանոթ ճանապարհներով: Բազմաթիվ կիլոմետրեր անցնելուց հետո Հանս-Արիսի հրամանով շարասյունը մտավ անտառ եւ սկսեց խորանալ նրա ծալքերը: Շարքում ուժեղներից մեկն էլ Համոն էր: Նա թեւանցուկ արած տանում էր Բոնդարենկոյին՝ ուկրաինացի մեծասիրտ մի տղայի, որի ծնկները ծալվում էին կրկնվող հիվանդությունից: Երբ մտան մի բացատ, որը խիտ ծառերի արանքում գրեթե չէր երեւում, հրաման եղավ հանգստանալ: Հյուծված ու հոգնած գերիները փռվեցին գետնին ու սկսեցին լիաթոք շնչել անտառի թարմ օդը: Նրանց կենտրոնում կանգնեց Հանս-Արիսը եւ հայտարարեց, որ ինքը սովետական հետախույզ է եւ համակենտրոնացման ճամբարի ղեկավարներին մոլորեցնելով՝ իրենց բերել է պարտիզաններին միանալու համար: Լսելով այդ հայտարարությունը՝ բարակած վզերով ու ոսկրացած գերիները ուրախությունից վեր թռան եւ սկսեցին ցատկոտել բացատի կանաչի վրա: Նրանք համբույրներով եւ գրկախառնումներով ողջունեցին միմյանց եւ ամենախորունկ զգացմունքով ապրեցին գերությունից ազատվելու առաջին պահը: Շատերը գերությունից ազատվելու կրքոտությամբ գրկեցին Հանս-Արիսին եւ սկսեցին համբուրել նրա երեսը, ձեռքերը, ոմանք էլ՝ նույնիսկ ոտքերը: Այդ երանավետ ժամանակամիջոցը ծննդյան օրվա նման թանկ էր ու նվիրական, լացի եւ ուրախության հանգուցակետի նման զարմանալի: Եթե այդ ցնծությունը նուր ուժ ուժ ու եռանդ էր հաղորդում գերիներին, ապա հոգնեցնում եւ թուլացնում էր Հանս-Արիսին, քանի որ նրա համար ծանր էր տանել երեք հարյուր հիսուն համբույր եւ ավելի շատ գրկախառնություն: Մի քանի ժամից հետո գերիների շարասյունը միացավ պարտիզանական ջոկատին, եւ թնդաց մարտական «ուռռա»-ն: Պարզվեց, որ խիզախ հետախույզ Հանս-Արիսը արցախցի Հովսեփյան Արամայիսն է, որը հատուկ հանձնարարությամբ եւ համապատասխան փաստաթղթերով հանդես է եկել որպես գերմանացի եւ գերմանական օֆիցեր ու հմտորեն կազմակերպել ռազմագերիների փախուստը: Արամայիսը գերմանական Հանս անվանը ավելացրել է իր անվան ար եւ իս մասերը եւ դարձրել Հանս-Արիս: Նա մի քանի ամիս գործել է թշնամու դիրքերում, իմացել նրա գաղտնիքներից շատերը եւ տեղյակ պահել սովետական հետախուզության ղեկավարությանը: Երեք հարյուր հիսուն գերիների միացումը պարտիզանական Նաումովյան միացմանը տեղի ունեցավ Արամայիսի խելքի եւ համարձակության շնորհիվ:

Համոն պարտիզանների շարքում աչքի էր ընկնում իր համարձակ գործողություններով: Նա իր ընկերների հետ միասին պայթեցնում էր կամուրջներ, խորտակում թշնամու գնացքներ, այրում պահեստներ: Ֆաշիստների դեմ նրա վրիժառության կրակն ավելի էր բորբոքվում, երբ հիշում էր գերության օրերն ու դավաճան Ադոյի վերաբերմունքը գերիների նկատմամբ: Արամայիսը, որպես Նաումովյան միավորման Ա. Միկոյանի անվան ջոկատի պետ, պարտիզան տղաներով կատաղի մարտեր էր տալիս թշնամու զորամիավորումների դեմ եւ հաղթանակներ տանում:

***

Ստալինգրադի ճակատամարտում սովետական զորքերի կողմից ֆաշիստական զորքերի շրջապատումն ու ջախջախումը ուրախացրել էր Դունուշին: Նա համոզվել էր, որ Միշան տուն կգա հաղթանակով եւ ամեն օր ձեռքերը երկինք պարզած աղոթք էր անում՝ խնդրելով Աստծուն, որպեսզի օգնի սովետական զորքերին, օգնի նաեւ իր Միշային: Երբ նա մեռելոց օրերին գերեզմանոցում այցելում էր Հայկի գերեզմանին, պառկում էր հողաթմբի վրա ու շշնջում. «Հայկ ջան, աչքդ լույս, մեր զորքերը ջարդել են ֆաշիստներին, մեր Միշան տուն կգա հաղթանակով»: Դունուշը մյուս կանանց բացատրում էր Ստալինգրադի ճակատամարտի նշանակությունը եւ նրանց խորհուրդ տալիս՝ մատաղացու գառ կամ աքլոր պահել հաղթանակի համար: Մտածում էր նաեւ այն մասին, որ կոլտնտեսության ժողովում ելույթ ունենա եւ Ադոյին անվանի ժողովրդի թշնամի: Սակայն նրա տրամադրության վերելքի օրերին եկել էր նաեւ Միշայի «սեւ թուղթը»: Փոստի աշխատողները անհարմար էին զգում ծրարը Դունուշին հանձնել, քանի որ ծրարի տեսքից գիտեին, թե նրա մեջ ինչ կա:

Չարաղետ ծրարը հասավ Դունուշին ու Ռափոյին, որը Միշային սպանող գնդակի նման խոցեց մորն ու աղջկան: Ցալվեցին Դունուշի ծնկները, նա փռվեց գետնին եւ սկսեց ծվծվալ:Թվում էր, թե Դունուշը քանդվում է, թվում էր, թե փլուզումն սկսվել է կրծքից: Ռափոն սառը ջուր էր ցանում արդեն ուշագնաց մոր երեսին եւ լացելով բարձրացնում էր

Արտաշ Զոհրապի Ստեփանյան

նրա գլուխը: Հարեւանները, իրար կանչելով, լցվում էին նրանց տունը: Թոնրատանը պտտուտահողմի պես բոլորվում էին մարդկային հառաչանքն ու վշտի ալիքները: Լալիս էին նաեւ հարեւանները, լալիս էին պատերը, լալիս էին, ինչպես ընդունված է ասել, քար ու թուփը: Դունուշը ուշքի չէր գալիս: Հարեւաններից Համբոյի կին Սաբեթը տրորում էր նրա երեսը, մյուսները կսմթում էին ոտներն ու մարմինը, թուլացած Ռափոն հազիվ բռնել էր մոր աջ ձեռքը: Շատերն սպասում էին, որ մոր վիճակին կընկնի նաեւ ինքը՝ Ռափոն, ու հետեւում էին նրան: Սգո շտեմարան այդ տունը թնդում էր հարեւանների ձայներից, մարդկանց աղաղակներից, ուշագնացին օգնողների կանչերից եւ լացողների հեծկլտոցներից: Սուգը գնալով սաստկանում էր, եւ այդ տանը բորբոքված դժբախտության լուրը տարածվում էր գյուղում, ու տարբեր տեղերից մարդիկ շտապում էին այնտեղ:

Դրսում խռնված մարդկանց արանքներով դժվարությամբ անցնելով՝ ներս մտան Սուսաննա Զարգարյանը եւ բժշկուհի Շուշիկ Չոբանյանը, ով անմիջապես մոտեցավ ուշագնացին եւ պահանջեց, որ կանայք նրանից հեռու կանգնեն: Շուշիկը դեղով լիք ապակե սրվակը Դունուշի քթին մոտեցնելով՝ նրան ուշքի էր բերում եւ Սուսաննայի հետ միասին համոզում, որ կարողանա դիմանալ: Սակայն Դունուշը մեկ ուշագնաց էր լինում, մեկ ուշքի գալիս ու մազերը պոկելով լալիս՝ ծնկան վրա կրելով Ռափոյի գլուխը: Ոչ ոք չէր կարող մխիթարանքի խոսք ասել: Մարդիկ իրենք էլ չգիտեին, թե ինչով կարելի կլինի Մխիթարել Դունուշին ու Ռափոյին: Իրոք, նման պահերին ցամաքում է մարդու միտքը եւ լեզուն կաշկանդվում: Թվում է, թե խոսելու փորձ անելիս ավելի ես բորբոքում սգավորներին:

Տիգրանի, Հայկի եւ Միշայի հայցքները չէին հեռանում Դունուշի աչքերից, եւ նրա սրտի մրմուռը ողողում էր խեղճ կնոջ էությունը, տունուտեղը եւ կարեկից հարեւաններին: Միակ համարձակը Սուսաննա Զարգարյանն էր, որ փորձում էր համոզել Դունուշին եւ աղջկան, որ նրանք սթափվեն եւ կարողանան համբերությամբ տանել ծանր վիշտը:

Վերջապես հաջողվեց հասնել այն բանին, որ Դունուշը էլ չէր ուշաթափվում եւ նստած տեղը, կզակը ափերի մեջ առած, հեծկլտում էր նվաղած ձայնով՝ ցնցելով չորացած ուսերը: Ուշ երեկոյան հարեւաններն սկսեցին ցրվել իրենց տները: Վերջինը ժամանակավոր հրաժեշտ տվեցին Սուսաննա Զարգարյանը եւ Շուշանիկ Չոբանյանը, որոնք պայմանավորվեցին՝ գիշերը մեկ-երկու անգամ այցելել դժբախտներին:

/շարունակելի/
Արտաշ Ստեփանյան

3.qxd 18/02/2025 14:15 Page 8

ՄՈՐՈՒՔ ԿԱՐՈՅԻ ՎՐԵԺԸ
/Քնարդահպինկական պոեմ/

/սկիզբը՝ էջ 1-ում

Ջուր հասցրեց իրեն խիզախ
հայուհին
Ու վիրակապեց վերքը արնածոր:
Խարսի կռվի մեջ ու Արվառինջի
Սարսափ էր թափում թշնամու
գլխին,
Թիկունքը պահում Գեւորգ Չաուշի,
Արյունն աչքն առած՝ ոսոխին ջնջում:
Ե՛վ խիզախ էր նա, եւ՛ անխոցելի՝
Այդ ու անհամար այլ կռիվներում:
Մարտնչում էր միշտ հպարտ,
առնացի,
Նենգ դահիճներից վրեժն իր առնում:

2

Ավելի խորն է Կարոն ընկղմվում
Գինարբուքի մեջ, ծովերում հուշի,
Բաժակ առ բաժակ ցամաք
դատարկում,
Ու քիչ է մնում՝ քար սիրտը պայթի...
Հրաշք էր Սասնո աշխարհը վայրի՝
Իր արագահոս գետերով շաչուն,
Գըլգըլի, հացի արտերով հուռթի,
Պաղ աղբյուրներով՝ ջինջ ու
կարկաչուն,
Դեղին բույլերով գնարբուկների,
Վառվռուն գույնով յոթ աղբոր
արյան:
Օրը բացվում էր երգով գեղջուկի,
Աստվածապաշտ տատի աղոթքով,
Ինքը նախիրն էր տանում արոտի,
Հայրն հողն էր վարում եզ ու արորով:
Ամեն քար ու թուփ պաշտելի էին
Սուրբ Մարաթուկի հավատի նման,
Մեղրից էլ անուշ գազպե-մանանան
Երկնքից թափվող պարգեւ էր
մարդուն:
Սակայն դրախտի այդ չնքաղ
հովտին
Մի արյունարբու Վիշապ էր տիրել,
Ծանրորեն նստել հողի տաք շնչին
Եվ օդն էր պղծում հոգով
թունավոր...
Թուրք ու քրդերը՝ ագահ, արնախում,
Գայլերի նման գիշատում էին,
Թալանում, ջնջում ամեն շեն
ու տուն,
Հայի արյունով սնվում,
հագենում...
Վարժարանի մեջ հայրենի գյուղի
Մայրենի լեզվի դասերն էր սերտում,
Տեւական երթը հայոց պատմության,
Ու խոսքն Աստծու, գիրը Նարեկի:
Հոգին լցվում էր ազգասիրությամբ,
Ու ազատության երազանքներով,
Խոր ատելությամբ՝ ոսոխի հանդեպ՝
Իրենց անդադրում ոճիր-նախճիրով:
Ֆիդայիների մասին էր լսում,
Որ պատմում էին գաղտնի շշուկով,
Նրանց կյանքերի համար աղոթում
Ամեն մի տանը, վանքում,
մատուռում:
Եվ ինքն էլ ուխտեց դառնալ ֆիդայի,
Հավիտյան փարվել փրկարար
զենքին,
Ձինվորը լինել Գեւորգ Չաուշի,
Քարը անել բարձ իր հոգնած գլխին:
Ու դեռ պատանի՝ նա երդում կերավ
Ավետարանի ու սրի վրա,
Առաջին գնդակն արձակեց սիրով
Նենգ ոսոխների շարքերի վրա...
Հարձակվում էին մթին գիշերով,
Հարամիների որջերը ջնջում,
Չարիքի դիմաց հատու հարվածով,
Դիցական զարկով վրեժը առնում:
Երազում էր նա Ազատ Հայաստան՝
Թուրքից, չերքեզից, քրդից,
սուլթանից:
Եվ այդ սրբազան երազի ճամփին
Կամքը անկոտրում,անսասան մնաց:

3

Տարիներ երկար իր տունը սարն էր,
Անկողինը՝ լոկ գետինը չորուկ,
Մեջքը գրկողը փամփշտակալն էր,
Կերածը՝ չորթան կամ մի բուռ կորեկ:
Նրա անունը սարսափ էր թափել
Ավազակների անսանձ կրքերին,
Անվեհեր ուժով ոտքի էր հանել
Նործիլ, նորընծա ֆիդայիներին:
Քիչ էին թվով, սակայն ահարկու,
Մի բանակ էին անընկճելի,
Որ սիրում էին, պաշտում մեկմեկու
Ու սերունդն էին Դյուցազունների:
Գալշո Մանուկը, քչախոս Գալեն,
Պողոսը Սեյտոն, Մակարը հսկա,
Փեթարա Իսրոն ու կտրիճ Ախոն,
Շենիկի Մանուկն ու Իսոն Գոմսա,
Առյուծ Ավագը, Փալաբեղ Կարոն,
Հրայր Դժոխքը, հսկա Մախլուտոն,
Սերոբը Աղբյուր, Անդրանիկ Փաշան
Մենակ կամ խմբով բյուր
ասկյարների
Դեմ էին ելնում, խիզախ
մարտ մղում...
Գեւորգը զարկվեց Սոլուխի կռվում,
Մակարն սպանվեց քրդերի ձեռամբ,
Բայց կռիվն իրենց եղավ անզիջում,
Ու արյան գետեր հոսեցին անափ:
Մի օր էլ եկավ վարդապետ Հեսուն՝
Մշո հոգեւոր առաջնորդը քաջ,
Ասաց, որ պետք է լեռներից իջնեն,
Տները գնան, վերցնեն բահ ու մաճ,
Իրենց ունեցած զենքերը հանձնեն,
Ստանան ներում օրենքի առաջ,
Ապահով խաղաղ, վարուցանք անեն
Վերից հռչակված եղբայրության մեջ:
-Հուրիաթ է արդեն, կռվելն
անիմաստ,-
Հեսուն շատ երկար, համառ
համոզեց,-
Արդեն եղբայր ենք թուրքի,
քրդի հետ,
Ամեն պատերազմ անցյալում մնաց:
Նայեց իր զենքին ու սիրտը փլվեց
Հեղեղից քշված պատնեշի նման:
Ի՞նչ են անելու կտրիճներն առյուծ
Առանց զենք-զրահ, փամփուշտ,
հրացան
Գայլ ու գազանի աշխարհում
այս պիղծ,
Թուրք ու քրդի հետ՝ նենգ ու
դրուժան,
Երբ ցանկանում են միշտ
ազատաբաղձ
Հայ ոգին ջնջել իր իսկ տան շեմին:
Ըմբոստ խոսքերով դիմադարձ եղան
Գալշո Մանուկը, Ախոն ու Չոլոն:
Ինքն էլ միացավ նրանց պայքարին
Ու գյուղ չդարձավ, մնաց լեռներում:

4

Առաջվա նման էլ կռիվ չկար,
Իր հետքի վրա էլ չէին ելնում,
Գայմագամ, չաուշ՝ ոխերիմ ու չար,
Կամ հազար ու մի լրտես, դավաճան:
Եվ հրացանի փողն էր ժանգոտվում,
Փամփուշտներն էին կրակվում
միայն
Որսի պահերին, լեռան ծերպերում՝
Աշխարհից, կյանքից հեռու ու
անդին:
Թափառում էր նա ձորից ձոր ու լեռ,
Իր երիտասարդ օրերը մաշում,
Վրեժի ծարավ հոգին մոլորվել,
Ապրելու համար ճամփա չէր գտնում:
...Հանկարծ Մարթայի լուսե դեմքն
հիշեց
Ձմռան մի օրվա արեւածագին,
Երբ Մարաթուկի ճերմակ կատարից
Բացավառ շողաց արփին հուրհրան,
Երբ ծյունաճերմակ աշխարհը շողաց
Լույսի համբույրից գույներով
վառման,
Իր երակներում մի սեր խլրտաց՝
Սիրտը անթեղեց գեղանի Մարթան
Իր ահեղ կռվի անցած օրերից,
Երբ ինքնամոռաց գոռ մարտ էր
մղում՝
Ապառաժ քարի թիկունքին հենված,
Կեսօրից մինչեւ խավար
մութընկան...
Հետո գիշերով գյուղ իջավ թաքուն,
Տեր- Քաջի քրոջ տան դուռը բախեց:
Ճրագի բոցը բեկվեց մեծ թախտին
Ու մի գեղանի պատկեր նկարեց:
Մոր ծոցում անուշ քնած էր Մարթան
Հրեշտակային մոգական քնով,
Ասես ծնվել էր Աստղիկ դիցուհին՝
Վարսերով հրե, վայրի նազանքով...
Ակնթարթորեն կախարդվեց Կարոն,
Շանթահար գերվեց տեսած
պատկերին,
Ապա ճրագը շատ արագ փչեց,
Որ կախարդանքը հավիտյան ցնդի,
Սերը տրոփող իր դաժան սրտից
Մեկեն հեռանա ու անդարձ չքվի,
Որ ֆիդայական արդար երդումից
Իր ճամփան հանկարծ երբեք
չշեղվի:
...Մարթայի դեմքը ճեփուճերմակ էր,
Ինչպես մարմնացած այս ձյունը
մաքուր՝
Տիրած Սասունին, հրին երկնային:
Ու որոնելու գնաց վեհաբար
Իր միակ սիրուն՝ Սասնո Դիցուհուն:
Եվ ամռան մի օր, տաքուկ կեսօրին
Գտավ Տեր-Քաջին գըլգըլի արտում՝
Գերանդին ձեռքին, ցանքը հնձելիս:
Կարոտով գրկեց ընկեր ֆիդայուն
Ու խոսեց խրոխտ, անկեղծ,
պարզերես...
Տեր-Քաջն էր հսկում բարձրիկ
կատարին
Փռված յայլաղի անշուք վրանում
Գիշերող քրոջ ու նրա դստեր
Քունն ու անդորրը, որ չհանդգնեն
Հանգիստը նրանց հանկարծ
խռովել:
Լավ գիտեր Կարոն, որ մի բանակ էլ
Եթե փորձեր գալ յայլաղի վրա,
Տեր-Քաջի ձեռքից չէր կարողանա
Փախչել-հեռանալ, գեթ ասեղ
տանել,
Ուր մնաց՝ տաներ սիրուն Մարթային:
Տեր-Քաջի ձեռամբ ու կամքով
հոժար
Կարոն գիշերով Մարթային տարավ՝
Կտրելով վիհեր, անառիկ ժայռեր,
Մի խուլ ձորակում թաքստոց գտավ:
...Գյուղն է փոթորկել վարքից
Մորուքի,
Մարդիկ ցասումով ոտքի են ելել՝
Գտնելու իրենց դստերը կորած,
Վրեժ առնելու առեւանգողից...
Մի նոր կռիվ է Մորուքի կյանքում,
Ծանր ավելի, քան մարտերը այն,
Որ մղում էր նա ենիչերու դեմ,
Թշնամու վրա գնդակ արձակում:
Իսկ այս կռվի մեջ զենքը չէր բանում.
Խորամանկություն, խելք էր
հարկավոր,
Որ սիրով տիրեր Մարթայի սրտին,
Իսկ վրեժ փնտրող ամբոխն
հանդարտվեր...
Եվ հազար ու մի հնարանքներով
Մի կողմից սիրտը գերեց Մարթայի,
Ու կարողացավ աննկուն կամքով
Դիմադարձ կանգնել անսանձ
փոթորկին:
Սասունն հանդարտվեց: Ամենքն
հասկացան,
Որ Մարթան պիտի արծիվ Մորուքին
Լինի սիրող կին, ընկեր անբաժան,
Միասին Հայոց աշխարհը պահեն,
Նոր օջախ հիմնեն, զավակներ
երկնեն...

5

Ցնծում էր Կարոն անշուք խրճիթում,
Իր չքնաղագեղ Մարթայի կողքին.
Աշխարհը այնքա՛ն գողտրիկ էր
թվում,
Իսկ կինը՝ այնքա՛ն քնքուշ ու անգին:
Գիշերն հրաշք էր, ցերեկը՝ դրախտ,
Երջանկություն էր մաղվում
երկնքից,
Հայրենի հողին՝ անհունից անհայտ
Եվ շիկնում, պայթում հրաբորբ
սիրուց:
Անգին էր Մարթան, աստղի չափ
շողուն,
Ու ոչ մի ոսկի, ոչ մի մարգարիտ
Նրա ժպիտի նման չէր փայլում
Իր սրտին մոտիկ, ջերմ ու
սիրառատ...
Հողը հայրենի նոր ուժ էր առել,
Նոր ծիլ էր տալիս՝ ճիչով երկունքի,
Երբեք կյանքն այդքան ձգող չէր
եղել՝
Այսքան գունագեղ, այսքան սիրելի:
...Մորուքը հիշեց բարուրն իր
դստեր,
Ու թաթիկները՝ ձնից էլ ճերմակ,
Կապույտ աչքերը՝ երկնի պես բոսոր
Եվ թոթովանքը՝ ձայնով անուշիկ:
Հիշեց ծաղկի մեջ փթթած բալենին,
Որ շուք էր անում խրճիթի վրա,
Կանաչ արտն հիշեց լեռան
տաք փեշին,
Հոգու աղոթքը՝ Վանքում Մարուքա:
Ապա աչքի դեմ հրեշներ եկան՝
Քրդի ու թուրքի, չերքեզի տեսքով,
Անկանգ երթերով մարդակերության:
Աշխարհն հայրենի ոտնակոխ եղավ:
Թշնամին բացեց երախն իր գազան,
Թե՛ ծեր, թե՛ մանուկ, թե՛ այր, եւ
թե՛ կին՝
Բոլորին լափեց մի անհուն ոխով,
Ու նախճիրներում բնաջինջ եղավ
Բովանդակ մի ազգ՝ անտեր,
անպաշտպան:
Պահած զենքերը դուրս բերեց
կրկին,
Հին ընկերներին իր շուրջը խմբեց,
Ջիհադի ելած ոհմակների դեմ
Կենաց ու մահու կռիվներ մղեց:
Բազմաթիվ կյանքեր թշնամու սրից
Փրկեց-հասցրեց սուրբ էջմիածին:
Արաքսից անդին, նոր հայրենիքում
Բնավորվեցին դուստրերն ու
Մարթան,
Ինքն էլ միացավ քաջ Անդրանիկի
Կամավորական, կռվող բանակին:
Մարտերով անցավ դաժան
ճանապարհ,
Մտավ էրզրում, հասավ Երզնկա,
Որտեղ կանգ առավ երթը
հաղթական,
Ապա սկսվեց նահանջ դավադիր,
Ճակատի լքում ու զենքի հանձնում
Պարտված թշնամուն՝ այնքան
նենգաբար
Ցարի գահն առած Լենինի
կամոք...
Ռուսաց զինվորը զենքն էր դեն
նետում,
Փութաջանորեն ճակատը լքում,
Խառնաշփոթված վերադառնում
տուն՝
Հայ զինվորներին թողնելով մենակ
Արնախում, հսկա բանակների
դեմ...
Փախուստից առաջ՝ անմիտ
նահանջից,
Գեներալները ռուսաց բանակի
Թշնամու վրա զենք էին ծախում՝
Զորեղացնելով բանակը թուրքի
Կենաց ու մահու այդ գոյամարտում:
Ոսոխն էր գալիս հեղեղի նման,
Ու նորից արյուն հեղվեց ամենուր,
Դժվար էր փակել աղետի ճամփան,
Հուսալքումի խուճապն ահավոր:
Աչքերի առաջ Լենին հրեշի
Բիրտ, արյունարբու պատկերը
եկավ՝
Սատանայադեմք ու ահազարհուր,
Եվ ոճիրները՝ անվերջ, դիվային,
Որոնց բոցն, ավաղ, Հայաստան
հասավ...
Թուրքը գալիս էր հեղեղի նման,
Ինքը կռվում էր համառ ճիգերով՝
Վեհ Անդրանիկի զորքերի շարքում,
Վերքերն իր բազում հաշվի
չառնելով:
Կռվում էր Չոլոն, Ախոն էր կռվում,
Սասնո Մուշեղը, Կարո Սասունին,
Սեպուհը հզոր, անպարտ
Մախլուտոն...
Ու անցնում էին արյան գետերով,
Քարվանկորուսի ճամփով մոլորուն,
Որը երկարեց Եփրատի ափից,
Հասավ Կարինին, Սարիղամիշին,
Կարսին, Անիին ու Ալեքսանդրին,
Ձգվեց մինչ Սյունիք ու Գողթան
գավառ,
Զուլֆա ու Թավրիզ ու
Ջանգիբասար...
Նա փորձեց հաշվել, թե իր
«Մոսինից»
Ու «Տասնոցներից» քանի մահացու
Գնդակ է թողել թշնամու վրա,
Քանիսին փռել զարկով անվրեպ՝
Ռազմադաշտերում սեւսիրտ,
մահապարատ...

/շարունակելի/

Խոսրով Խլղաթյան

ԳԵՂԱՄԱ աշխարհ
Լրատվական գործունեություն իրականացնող «Գեղարքունիք» թերթի խմբագրություն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
էլ.հասցե՝ khosrov1@yandex. ru
Գլխավոր խմբագիր՝ Խոսրով Խլղաթյան
հեռ. բջջ. 094022692
Վկայական՝ 02 Ա 050560: Գրանցման համարը՝ 25.120.00834:
Տրված 07.05.2001թ.: Տպաքանակը՝ 1000: Ծավալը՝ 2 մամուլ:
Թողարկման օրը՝ 14. 02. 2025 թ.:
Տպագրվում է «Սամարկ» ՍՊԸ տպարանում:
«Գեղամա աշխարհ» թերթի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ https://tert.nla.am կայքում: